

► B

ԽՈՐՀՐԴԻ 1978 թվականի հունիսի 25-ի թիվ 78/660 ՉՈՐՀՈՐԴ ՀՐԱՀԱՆԳ

Որոշակի տեսակի ընկերությունների տարեկան

ֆինանսական հաշվետվությունների մասին՝

հիմնված Պայմանագրի 54 (3) (է) հոդվածի հիման վրա

(ՊՏ L 222, 14.8.1978թ., էջ 11)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

		No	page	date
► <u>M1</u>	Խորհրդի 1983 թվականի հունիսի 13-ի թիվ L 193 83/349/ԵՏՀ յոթերորդ հրահանգով	1		18.07.1983թ.
<u>M2</u>	Խորհրդի 1984 թվականի նոյեմբերի 27-ի L 314 84/569/ԵՏՀ հրահանգով	28		4.12.1984թ.
► <u>M3</u>	Խորհրդի 1989 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ L 395 89/666/ԵՏՀ տասնմեկերորդ հրահանգով	36		30.12.1989թ.
► <u>M4</u>	Խորհրդի 1990 թվականի նոյեմբերի 8-ի թիվ L 317 90/604/ԵՏՀ հրահանգով	57		16.11.1990թ.
► <u>M5</u>	Խորհրդի 1990 թվականի նոյեմբերի 8-ի թիվ L 317 90/605/ԵՏՀ հրահանգով	60		16.11.1990թ.
<u>M6</u>	Խորհրդի 1994 թվականի մարտի 21-ի թիվ 94/8/ԵՀ L 82 հրահանգով	33		25.03.1994թ.
<u>M7</u>	Խորհրդի 1999 թվականի հունիսի 17-ի թիվ L 162 1999/60/ԵՀ հրահանգով	65		26.06.1999թ.
► <u>M8</u>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 2001/65/ԵՀ հրահանգով	L 283	28	27.10.2001թ.
► <u>M9</u>	Խորհրդի 2003 թվականի մայիսի 13-ի թիվ L 120 2003/38/ԵՀ հրահանգով		22	15.05.2003թ.
► <u>M10</u>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունիսի 18-ի թիվ 2003/51/ԵՀ հրահանգով	L 178	16	17.07.2003թ.
► <u>M11</u>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի մայիսի 17-ի թիվ 2006/43/ԵՀ	L 157	87	9.06.2006թ.

հրահանգով

- **M12** Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 L 224 1 16.08.2006թ. թվականի հունիսի 14-ի թիվ 2006/46/ԵՀ հրահանգով
- **M13** Խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 20-ի թիվ L 363 137 20.12.2006թ. 2006/99/EC հրահանգով
- **M14** Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 L 164 42 26.06.2009թ. թվականի հունիսի 18-ի թիվ 2009/49/ԵՀ հրահանգով

Փոփոխված՝

- **A1** Հունաստանի անդամակցության մասին ակտով L 291 17 19.11.1979թ.
- **A2** Իսպանիայի և Պորտուգալիայի L 302 23 15.11.1985թ. անդամակցության մասին ակտով
- A3** Ավստրիայի, Շվեդիայի և Ֆինլանդիայի C 241 21 29.08.1994թ. անդամակցության մասին ակտով
- (լրամշակված՝ Խորհրդի 95/1/ԵՀ որոշմամբ, L 001 1 .. Եվրատոմ, ԱՊԵՀ)
- **A4** Չեխիայի Հանրապետության, Էստոնիայի L 236 33 23.09.2003թ. Հանրապետության, Կիպրոսի Հանրապետության, Լատվիայի Հանրապետության, Լիտվայի Հանրապետության, Հունգարիայի Հանրապետության, Մալթայի Հանրապետության, Լեհաստանի Հանրապետության, Սլովենիայի Հանրապետության և Սլովակիայի Հանրապետության անդամակցության պայմանների վերաբերյալ ակտով և այն պայմանագրերի լրամշակումներով, որոնց վրա հիմնված է Եվրոպական միությունը

Ծանոթագրություն. Սույն համախմբված տարբերակը հղումներ է պարունակում Եվրոպական հաշվարկային միավորին և (կամ) ԵԱՄ-ին, որոնք 1999 թվականի հունվարի 1-ից պետք է հասկացվեն որպես հղումներ եվրոյին. Խորհրդի թիվ 3308/80 կանոնակարգ (ԵՏՀ) (ՊՏ L 345, 20.12.1980թ., էջ 1) և Խորհրդի թիվ 1103/97 (ԵՀ) կանոնակարգ (ՊՏ L 162, 19.06.1997թ., էջ 1):

▼B

ԽՈՐՀՐԴԻ 1978 թվականի հուլիսի 25–ի թիվ 78/660 ՉՈՐՐՈՐԴ ՀՐԱՀԱՆԳ

Որոշակի տեսակի ընկերությունների տարեկան

ֆինանսական հաշվետվությունների մասին՝

հիմնված Պայմանագրի 54 (3) (է) հոդվածի հիման վրա

(78/660/ԵՏՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը
և, մասնավորապես, դրա 54 (3) (է) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (1),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

քանի որ որոշակի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հետ
կապված տարեկան ֆինանսական հաշվետվություններ և տարեկան զեկույցներ
ներկայացնելուն ու բովանդակությանը վերաբերող ազգային դրույթների համաձայնեցումը,
դրանցում օգտագործվող գնահատման մեթոդները և դրանց հրապարակումը հատուկ
կարևորություն է ներկայացնում մասնակիցների ու երրորդ անձանց պաշտպանության
առումով,

քանի որ այդ ոլորտներում միաժամանակյա համաձայնեցման անհրաժեշտություն կա այդ
ձևի ընկերությունների համար, որովհետև մի կողմից այդ ընկերությունների
գործունեությունը հաճախ տարածվում է պետական սահմաններից դուրս, և մյուս կողմից՝
դրանք, իրենց գուտ ակտիվներից բացի, երրորդ անձանց ոչ մի երաշխիք չեն տրամադրում.
ավելին, քանի որ նման համաձայնեցման անհրաժեշտությունն ու հրատապությունն
ընդունվել ու հաստատվել է թիվ 68/151/ԵՏՀ հրահանգի (3) 2 (1) (գ) հոդվածով,

ավելին, քանի որ անհրաժեշտ է Համայնքում սահմանել նվազագույն համարժեք իրավական
պահանջներ այն ֆինանսական տեղեկատվության ծավալի առումով, որը միմյանց հետ
մրցակցության մեջ գտնվող ընկերությունները պետք է մատչելի դարձնեն հանրությանը,

քանի որ տարեկան ֆինանսական հաշվետվությունները պետք է ճշմարտացիորեն և
արդարացիորեն արտացոլեն ընկերության ակտիվները և պարտավորությունները,
ֆինանսական վիճակը և շահույթը կամ վնասը, և քանի որ այդ նպատակով հաշվապահական
հաշվեկշռի, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունների համար պետք է
սահմանվի պարտադիր կառուցվածք, և քանի որ պետք է հաստատվի ֆինանսական
հաշվետվություններին կից ծանոթագրությունների և տարեկան զեկույցի նվազագույն
բովանդակությունը, և քանի որ, այնուամենայնիվ, շեղում կարելի է կատարել տնտեսական ու
սոցիալական փոքր կարևորություն ունեցող որոշ ընկերությունների նկատմամբ,

քանի որ ակտիվների և պարտավորությունների գնահատման զանազան մեթոդները պետք է համաձայնեցվեն այնքանով, որքանով անհրաժեշտ է ապահովել տարեկան ֆինանսական հաշվետվություններում համեմատելի ու համարժեք տեղեկատվության բացահայտումը,

քանի որ բոլոր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Հրահանգը, պետք է հրապարակվեն թիվ 68/151/ԵՏՀ հրահանգի համաձայն, և քանի որ, այնուամենայնիվ, այդ կապակցությամբ նմանապես որոշ շեղումներ կարելի է կատարել փոքր և միջին ընկերությունների նկատմամբ,

քանի որ տարեկան ֆինանսական հաշվետվությունները պետք է ենթարկվեն աուդիտի իրավասու անձանց կողմից, որոնց նվազագույն որակավորումը ենթակա է հետագա համաձայնեցման, և քանի որ միայն փոքր ընկերությունները կարող են ազատվել աուդիտի այս պարտավորությունից,

քանի որ, երբ ընկերությունը պատկանում է որևէ խմբի, ցանկալի է, որ այդ խմբի, որպես մեկ ամբողջության, գործունեության ճշմարիտ և արդարացի պատկերն արտացոլող ֆինանսական հաշվետվությունները հրապարակվեն, և քանի որ, այնուամենայնիվ, նախքան «Համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասին» Խորհրդի հրահանգն ուժի մեջ մտնելը, սույն Հրահանգի որոշ դրույթներից անհրաժեշտ է շեղումներ կատարել,

քանի որ որոշ անդամ պետություններում օրենսդրության հետ կապված առկա դրությունից բխող դժվարությունները հաղթահարելու համար սույն Հրահանգի որոշ դրույթների իրականացման համար տրված ժամանակահատվածը պետք է ավելի երկար լինի, քան ընդհանրապես նման դեպքերում սահմանված ժամանակահատվածը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Սույն Հրահանգով սահմանված համաձայնեցման միջոցները կիրառվում են հետևյալ տեսակի ընկերություններին վերաբերող անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի, վարչական ակտերի նկատմամբ.

– Գերմանիայում՝

die Aktiengesellschaft, die Kommanditgesellschaft auf Aktien, die Gesellschaft mit beschränkter Haftung,

– Բելգիայում՝

la société anonyme/de naamloze vennootschap, la société en commandite par actions / de commanditaire vennootschap op aandelen, la société de personnes à responsabilité limitée/de personenvennootschap met beperkte aansprakelijkheid,

– Դանիայում՝

aktieselskaber, kommanditaktieselskaber, anpartsselskaber,

– Ֆրանսիայում՝

la société anonyme, la société en commandite par actions, la société à responsabilité limitée,

–Իռլանդիայում՝

public companies limited by shares or by guarantee, private companies limited by shares or by guarantee,

– *Բտալիայում՝*

la società per azioni, la società in accomandita per azioni, la società a responsabilità limitata,

– *Լյուքսեմբուրգում՝*

la société anonyme, la société en commandite par actions, la société à responsabilité limitée,

- *Նիդերլանդներում՝*

de besloten vennootschap met beperkte aansprakelijkheid,

- *Միացյալ Թագավորությունում՝*

public companies limited by shares or by guarantee, private companies limited by shares or by guarantee;

▼ A1

Հունաստանում՝

η ανώνυμη εταιρία, η εταιρία περιορισμένης ευθύνης, η ετερόρρυθμη κατά μετοχές εταιρία;

▼ A2

– *Իսպանիայում՝*

la sociedad anónima, la sociedad comanditara por acciones, la sociedad de responsabilidad limitada,

- *Պորտուգալիայում՝*

a sociedade anónima, de responsabilidade limitada, a sociedade em comandita por açções, a sociedadepor quotas de responsabilidade limitada,

▼

- *Ավստրիայում՝*

die Aktiengesellschaft, die Gesellschaft mit beschränkter Haftung,

– *Ֆինլանդիայում՝*

osakeyhtiö/aktiebolag,

- *Շվեդիայում՝*

aktiebolag,

▼ A4

– *Չեխիայի Հանրապետությունում՝*

společnost s ručením omezeným, akciová společnost,

– *Էստոնիայում՝*

aktsiaselts, osaühing,

– *Կիպրոսում՝*

Δημόσιες εταιρείες περιορισμένης ευθύνης με μετοχές ή με εγγύηση, ιδιωτικές εταιρείες περιορισμένης ευθύνης με μετοχές ή με εγγύηση,

– *Լաստվիայում՝*

akciju sabiedrība, sabiedrība ar ierobežotu atbildību,

– *Լիտվայում՝*

akcinės bendrovės, uždariosios akcinės bendrovės,

– *Հունգարիայում՝*

részvénytársaság, korlátolt felelősségű társaság,

– *Մալթայում՝*

kumpanija publika —public limited liability company, kumpanija privata —private limited liability company,

soċjeta in akkomandita bil-kapital maqsum f'azzjonijiet —partnership en commandite with the capital divided into shares,

– *Լեհաստանում՝*

spółka akcyjna, spółka z ograniczoną odpowiedzialnością, spółka komandytowo-akcyjna,

– *Սլովենիայում՝*

delniška družba, družba z omejeno odgovornostjo, komanditna delniška družba,

– *Սլովակիայում՝*

akciová spoločnosť, spoločnosť s ručením obmedzeným,

▼M13

– *Բուլղարիայում՝*

акционерно дружество, дружество с ограничена отговорност, командитно дружество с акции,

– *Ռումինիայում՝*

societate pe acțiuni, societate cu răspundere limitată, societate în comandită pe acțiuni:

M5

Սույն Հրահանգով սահմանված համաձայնեցման միջոցները կիրառվում են նաև հետևյալ տեսակի ընկերություններին վերաբերող անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի, վարչական ակտերի նկատմամբ.

ա) Գերմանիայում՝

die offene Handelsgesellschaft, die Kommanditgesellschaft,

բ) Բելգիայում՝

la société en nom collectif/de vennootschap onder firma, la société en commandité (SIC! commandite) simple/de gewone commanditaire vennootschap,

գ) Դանիայում՝

interessentskaber, kommanditselskaber,

դ) Ֆրանսիայում՝

la société en nom collectif, la société en commandite simple,

ե) Հունաստանում՝

η ομόρρυθμος εταιρία, η ετερόρρυθμος εταιρία,

զ) Իսպանիայում՝

sociedad colectiva, sociedad en comandita simple,

է) Իռլանդիայում՝

partnerships, limited partnerships, unlimited companies,

ը) Իտալիայում՝

la società in nome collettivo, la società in accomandita semplice,

թ) Լյուքսեմբուրգում՝

la société en nom collectif, la société en commandite simple,

ժ) Նիդերլանդներում՝

de vennootschap onder firma, de commanditaire vennootschap,

ժա) Պորտուգալիայում՝

sociedade em nome colectivo, sociedade em comandita simples,

ժբ) Միացյալ Թագավորությունում՝

partnerships, limited partnerships, unlimited companies,



(ժգ) Ավստրիայում՝

die offene Handelsgesellschaft, die Kommanditgesellschaft,

ժդ) Ֆինլանդիայում՝

avoin yhtiö/ öppet bolag, kommandiittiyhtiö/kommanditbolag,

ժե) Շվեդիայում՝

handelsbolag, kommanditbolag,

▼ A4

ժզ) Չեխիայի Հանրապետությունում՝

veřejná obchodní společnost, komanditní společnost, družstvo,

ժէ) Էստոնիայում՝

täisühing, usaldusühing,

ժը) Կիպրոսում՝

Ομόρρυθμες και ετερόρρυθμες εταιρείες (συνεταιρισμοί),

ժթ) Լատվիայում՝

pilnsabiedrība, komanditsabiedrība,

ի) Լիսովայում՝

tikrosios ūkinės bendrijos, komanditinės ūkinės bendrijos,

իա) Հունգարիայում՝

közkereseti társaság, betéti társaság, közös vállalat, egyesülés,

իբ) Մալթայում՝

Socjeta f'isem kollettiv jew socjeta in akkomandita, bil-kapital li mhux maqsum f'azzjonijiet meta s-socji kollha li g'andhom responsabbilita' llimitata huma socjetajiet tat-tip deskritt f'sub paragrafu 1 – *en nom collectif* ընկերակցություն կամ *en commandite* ընկերակցություն, որի կապիտալը բաժանված չէ բաժնետոմսերի, երբ անսահմանափակ պատասխանատվությամբ բոլոր մասնակիցները 1–ին պարբերության մեջ նկարագրված ընկերակցություններ են,

իգ) Լեհաստանում՝

spółka jawna, spółka komandytowa,

իդ) Սլովենիայում՝

družba z neomejeno odgovornostjo, komanditna družba,

իե) Սլովակիայում՝

verejná obchodná spoločnosť, komanditná spoločnosť,

▼M13

իզ) Բուլղարիայում՝

събирателно дружество, командитно дружество,

իէ) Ռումինիայում՝

asocietate în nume colectiv, societate în comandită simplă

M5

Երբ բոլոր անդամները, որոնք անսահմանափակ պատասխանատվություն ունեն, համարվում են առաջին ենթապարբերությունում սահմանված ընկերություններ կամ ընկերություններ, որոնց վրա չեն տարածվում անդամ պետությունների իրավունքները, սակայն թիվ 68/151/ԵՏՀ հրահանգում սահմանված ընկերություններին համադրելի կազմակերպաիրավական ձև ունեն :

Սույն Հրահանգը տարածվում է նաև երկրորդ ենթապարբերությունում սահմանված այն ընկերությունների կամ ֆիրմաների վրա, որտեղ անսահմանափակ պատասխանատվություն ունեցող բոլոր անդամները համարվում են այդ կամ առաջին ենթապարբերությունում սահմանված ընկերություններ:

▼B

2. Նախքան լրացուցիչ համաձայնեցման գործընթացի ավարտը՝ անդամ պետությունները կարող են սույն Հրահանգի դրույթները չկիրառել բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների կամ ապահովագրական ընկերությունների նկատմամբ:

ԲԱԺԻՆ 1

Ընդհանուր դրույթներ

Հոդված 2

1. Տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներառում են հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները: Այդ փաստաթղթերը կազմում են մի ամբողջություն:

▼M10

Անդամ պետությունները կարող են թույլատրել կամ պահանջել, որ առաջին ենթապարբերությունում նշված փաստաթղթերից բացի, տարեկան ֆինանսական հաշվետվություններում ներառվեն այլ հաշվետվություններ:

▼B

2. Դրանք կազմվում են պարզորոշ կերպով և սույն Հրահանգի դրույթներին համապատասխան:

3. Տարեկան ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են ընկերության ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի ճշմարիտ ու արդարացի պատկերը:

4. Եթե սույն Հրահանգի դրույթների կիրառությունը բավարար չէ 3-րդ պարբերության իմաստով ճշմարիտ և արդարացի պատկեր ապահովելու համար, ապա պետք է լրացուցիչ տեղեկատվություն տրամադրվի :

5. Բացառիկ դեպքերում, երբ սույն Հրահանգի որևէ դրույթի կիրառումն անհամատեղելի է 3-րդ պարբերությամբ սահմանված պարտավորության հետ, այդ դրույթը պետք է շրջանցվի՝ 3-րդ պարբերության իմաստով ճշմարիտ և արդարացի պատկեր ապահովելու համար: Նման ցանկացած շրջանցում պետք է բացահայտվի հաշվետվություններին կից ծանոթագրություններում՝ դրա հիմնավորումների մեկնաբանության, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի վրա դրա ազդեցության մեկնաբանության հետ մեկտեղ: Անդամ պետությունները կարող են սահմանել խնդրո առարկա բացառիկ դեպքերը և համապատասխան հատուկ կանոնները:

6. Անդամ պետությունները կարող են թույլ տալ կամ պահանջել այլ տեղեկատվության բացահայտում տարեկան ֆինանսական հաշվետվություններում՝ ի լրումն սույն հրահանգի համաձայն պահանջվող տեղեկատվության:

ԲԱԺԻՆ 2

Ընդհանուր դրույթներ՝ հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վերաբերյալ

Հոդված 3

Հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության կառուցվածքը, մասնավորապես, դրանք ներկայացնելու համար ընդունված ձևը,

տարեցտարի (ֆինանսական տարի) փոփոխության չի ենթարկվում: Այս սկզբունքից շեղում թույլատրվում է բացառիկ դեպքերում: Ցանկացած նման շեղում պետք է բացահայտվի հաշվետվություններին կից ծանոթագրություններում՝ դրանց հիմնավորումների մեկնաբանության հետ մեկտեղ:

Հոդված 4

1. 9-րդ, 10-րդ և 23-26-րդ հոդվածներով նախատեսված հոդվածները պետք է նշված հերթականությամբ առանձին–առանձին արտացոլվեն հաշվապահական հաշվեկշռում և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Հոդվածների առավել մանրամասն բաժանում թույլատրվում է՝ պայմանով, որ պահպանվեն կառուցվածքները: Նոր հոդվածներ կարող են ավելացվել՝ պայմանով, որ դրանց բովանդակությունը ներառված չէ կառուցվածքով սահմանված հոդվածներից որևէ մեկում: Անդամ պետությունները կարող են հոդվածների նման ենթաբաժանում կամ նոր հոդվածների ավելացում պահանջել:

2. Հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այն հոդվածների կառուցվածքը, անվանացանկը և տերմինաբանությունը, որոնց արաբական թվանշաններ են նախորդում, պետք է վերաձևակերպվեն, եթե այդպես է պահանջում կազմակերպության հատուկ բնույթը: Նման վերաձևակերպումներ անդամ պետությունները կարող են պահանջել տնտեսության որոշակի հատվածի մաս կազմող կազմակերպություններից:

3. Հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության հոդվածները, որոնց նախորդում են արաբական թվանշաններ, կարող են համակցվել, եթե՝

ա) 2(3) հոդվածի իմաստով դրանք գումարային առումով էական չեն, կամ

բ) նման համակցումն առավել պարզորոշություն է ապահովում՝ պայմանով, որ համակցված հոդվածներն առանձին նշվեն հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Անդամ պետությունները կարող են նման համակցումներ պահանջել:

4. Հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության յուրաքանչյուր հոդվածի համար պետք է նշվի նախորդ ֆինանսական տարվա համապատասխան հոդվածի տվյալը: Անդամ պետությունները կարող են սահմանել, որ, եթե այդ գումարները համեմատելի չեն, նախորդ ֆինանսական տարվա գումարը պետք է համապատասխանեցվի: Ամեն դեպքում գումարների անհամեմատելիությունը և ցանկացած համապատասխանեցում պետք է բացահայտվի հաշվետվություններին կից ծանոթագրություններում՝ համապատասխան մեկնաբանություններով:

5. Բացառությամբ, երբ, 4-րդ պարբերության իմաստով, գոյություն ունի համապատասխան հոդված՝ նախորդ ֆինանսական տարվա համար, հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այն հոդվածը, որը գումար չի պարունակում, ցույց չի տրվում:

▼M10

6. Անդամ պետությունները կարող են թույլատրել կամ պահանջել, որ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հաշվապահական հաշվեկշռում նշված հոդվածներում արտացոլված գումարները ներկայացվեն գրանցված գործարքի կամ պայմանավորվածության առարկայի կապակցությամբ: Նման թույլտվությունը կամ պահանջը կարող է կիրառվել միայն Խորհրդի 1983 թվականի հունիսի 13-ի թիվ 83/349/ԵՏՀ յոթերորդ հրահանգում նախատեսված ընկերության որոշ տեսակների և(կամ) համախմբված հաշիվների նկատմամբ (4):

Հոդված 5

1. Շեղում կատարելով 4 (1) և (2) հոդվածից՝ անդամ պետությունները կարող են ներդրումային ընկերությունների և ֆինանսական հոլդինգային ընկերությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների համար սահմանել հատուկ կառուցվածքներ՝ պայմանով, որ այդ կառուցվածքները տվյալ ընկերություններին 2 (3) հոդվածում նախատեսվածին համարժեք նկարագրեն:

2. Սույն Հրահանգի իմաստով, «ներդրումային ընկերություններ» նշանակում է միայն՝

ա) այն ընկերությունները, որոնց բացառիկ նպատակը տարբեր արժեթղթերում, անշարժ գույքի մեջ և այլ ակտիվներում իրենց միջոցները ներդնելն է՝ միմիայն ներդրումային ռիսկերը բաշխելու և իրենց բաժնետերերին իրենց ակտիվների կառավարումից ստացված արդյունքները տրամադրելու նպատակով.

բ) հաստատագրված կապիտալ ունեցող ներդրումային ընկերությունների ասոցիացված ընկերություններ, եթե նման ասոցիացված ընկերությունների միակ նպատակն այդ ներդրումային ընկերությունների կողմից թողարկված լրիվ վճարված բաժնետոմսերը ձեռք բերելն է՝ չսահմանափակելով թիվ 77/91/ԵՏՀ հրահանգի 20(1)(ը) հոդվածի դրույթների գործողությունը (5):

3. Սույն Հրահանգի իմաստով՝ «ֆինանսական հոլդինգային ընկերություններ» նշանակում է միայն այն ընկերությունները, որոնց միակ նպատակն այլ կազմակերպություններում միջոցներ ձեռք բերելը և նման միջոցները կառավարելն ու դրանք շահույթի վերածելն է՝ առանց ուղղակի կամ անուղղակի ներգրավված լինելու այդ կազմակերպությունների կառավարման գործում՝ չսահմանափակելով նրանց իրավունքները՝ որպես բաժնետերեր: Այդ ընկերությունների գործունեության վրա դրվող սահմանափակումները պետք է այնպիսին լինեն, որ հնարավոր լինի դրանց պահպանման վերահսկումը վարչական կամ դատական մարմնի կողմից:

Հոդված 6

Անդամ պետությունները կարող են թույլատրել կամ պահանջել հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության կառուցվածքի լրամշակում այնպես, որ այն ներառի շահույթի բաշխումը և վնասի փոխհատուցումը:

Հոդված 7

Արգելվում է ակտիվների ու պարտավորությունների կամ եկամուտների և ծախսերի հոդվածների միջև որևէ հաշվանցում:

ԲԱԺԻՆ 3

Հաշվապահական հաշվեկշռի կառուցվածքը

Հոդված 8

Հաշվապահական հաշվեկշիռը ներկայացնելու համար անդամ պետությունները հաստատում են 9-րդ և 10-րդ հոդվածներում սահմանված կառուցվածքներից մեկը կամ

երկուսը: Եթե անդամ պետությունը հաստատում է երկուսն էլ, այդ դեպքում այն կարող է թույլ տալ ընկերություններին ընտրություն կատարել դրանց միջև:

▼M10

Անդամ պետությունները կարող են թույլ տալ կամ պահանջել, որ ընկերությունները 10ա հոդվածում սահմանված հաշվապահական հաշվեկշիռը ընդունեն որպես այլ կերպ սահմանված կամ թույլատրված կառուցվածքին այլընտրանք:

▼B

Հոդված 9

Ակտիվները

Ա. Հետ կանչված, բայց չվճարված տեղաբաշխված կապիտալ

(բացառությամբ, եթե ազգային իրավունքը նախատեսում է, որ կանչված կապիտալը նշվի որպես «Պարտավորություններ»): Այդ դեպքում կապիտալի այն մասը, որը կանչվել է, բայց դեռևս չի վճարվել, պետք է որպես ակտիվ նշվի կամ Ա-ում կամ Դ(II)(5)-ում):

Բ. Հիմնադրման ծախսերը

Ինչպես սահմանված է ազգային իրավունքով և այնքանով, որքանով ազգային իրավունքը թույլ է տալիս, որ դրանք որպես ակտիվ նշվեն: Ազգային իրավունքը կարող է նաև նախատեսել, որ հիմնադրման ծախսերը նշվեն որպես «Ոչ նյութական ակտիվներ»-ի առաջին հոդված:

Գ. Հիմնական միջոցները

I. Ոչ նյութական ակտիվներ

1. Գիտահետազոտական և նախագծային աշխատանքների հետ կապված ծախսերն այնքանով, որքանով ազգային իրավունքը թույլատրում է, որ դրանք նշվեն որպես ակտիվ:

2. Կոնցեսիաներ, արտոնագրեր, լիցենզիաներ, առևտրային նշաններ և նմանատիպ իրավունքներ ու ակտիվներ, եթե դրանք՝

ա) ձեռք են բերվել արժեքավոր փոխհատուցմամբ և կարիք չկա, որ նշվեն Գ(I)(3)-ում, կամ

բ) ստեղծվել են կազմակերպության իսկ կողմից՝ այնքանով, որքանով ազգային իրավունքը թույլատրում է, որ դրանք նշվեն որպես ակտիվ:

3. Գուղվիլ՝ այնքանով, որքանով այն ձեռք է բերվել արժեքավոր փոխհատուցմամբ:

4. Տարածամկետ վճարումներ:

II. Նյութական ակտիվներ:

1. Հող և շենքեր:

2. Կառուցվածքներ և մեքենա-մեխանիզմներ:

3. Այլ շինություններ և կահավորանք, գործիքներ և սարքավորումներ:

4. Տարածամկետ վճարումներ և շինարարության ընթացքի մեջ գտնվող նյութական ակտիվներ:

III. Ֆինանսական ակտիվներ

1. Փոխկապակցված կազմակերպություններում բաժնետոմսերը:
2. Փոխկապակցված կազմակերպություններին տրված փոխառությունները:
3. Մասնակցության մասնաբաժինները:
4. Փոխառություններ կազմակերպություններին, որոնց հետ ընկերությունը կապված է մասնակցության մասնաբաժինների միջոցով:
5. Որպես հիմնական միջոցներ դիտարկվող ներդրումները:
6. Այլ փոխառություններ:
7. Սեփական բաժնետոմսերը (դրանց անվանական արժեքի կամ, անվանական արժեքի բացակայության դեպքում՝ հաշվապահական հաշվեկշռում արտացոլված անվանական արժեքի նշումով), եթե ազգային իրավունքը թույլ է տալիս, որ դրանք նշվեն հաշվապահական հաշվեկշռում:

Դ. Ընթացիկ ակտիվները

I. Շրջանառու միջոցները

1. Հումք և արագամաշ առարկաներ:
2. Ընթացիկ աշխատանքներ:
3. Պատրաստի արտադրանք և ապրանքներ՝ վերավաճառքի համար:
4. Տարածամկետ վճարումներ:

II. Դեբիտորական պարտքերը

(Գումարներ, որոնց մարման ժամկետը գերազանցում է մեկ տարին, պետք է առանձին նշվեն յուրաքանչյուր հոդվածի համար:)

1. Առևտրային դեբիտորական պարտքեր:
2. Փոխկապակցված կազմակերպությունների պարտքերի գումարներ:
3. Այն կազմակերպությունների պարտքերը, որոնց հետ ընկերությունը կապված է մասնակցության մասնաբաժինների միջոցով:
4. Այլ դեբիտորական պարտքեր:
5. Կանչված, բայց չվճարված տեղաբաշխված կապիտալ (բացառությամբ, եթե ազգային իրավունքը նախատեսում է, որ կանչված կապիտալը Ա-ում նշվի որպես ակտիվ):
6. Կանխավճարներ և կուտակված եկամուտ (բացառությամբ, եթե ազգային իրավունքը չի նախատեսում, որ դրանք Ե-ում նշվեն որպես ակտիվ):

III. Ներդրումները

1. Փոխկապակցված կազմակերպություններում բաժնետոմսերը:

2. Սեփական բաժնետոմսեր (դրանց անվանական արժեքի կամ, անվանական արժեքի բացակայության դեպքում՝ հաշվապահական հաշվեկշռում արտացոլված անվանական արժեքի նշումով), եթե ազգային իրավունքը թույլ է տալիս, որ դրանք նշվեն հաշվապահական հաշվեկշռում:

3. Այլ ներդրումներ:

IV. Դրամական միջոցներ հաշիվներում և կանխիկը

Ե. Կանխավճարներ և կուտակված եկամուտ

(բացառությամբ, եթե ազգային իրավունքը չի նախատեսում, որ այդ հոդվածները Դ(II)(6)-ում նշվեն որպես ակտիվ)

Զ. Ֆինանսական տարվա վնաս

(բացառությամբ, եթե ազգային իրավունքը չի նախատեսում, որ այն նշվի Ա «VI»-ի «Պարտավորություններ»-ում):

Պարտավորություններ

Ա. Կապիտալ և պահուստներ

I. Տեղաբաշխված կապիտալ

(բացառությամբ, երբ ազգային իրավունքը նախատեսում է, որ կանչված կապիտալը նշվի այս հոդվածում: Տեղաբաշխված կապիտալի և վճարված կապիտալի գումարներն այդ դեպքում պետք է նշվեն առանձին-առանձին):

II. Էմիսիոն եկամուտ

III. Վերազնահատման պահուստ

IV. Պահուստներ

1. Օրենքով նախատեսված (պարտադիր) պահուստ՝ այնքանով, որքանով ազգային իրավունքը պահանջում է նման պահուստ:

2. Սեփական բաժնետոմսերի պահուստ՝ այնքանով, որքանով ազգային իրավունքը պահանջում է նման պահուստ՝ չսահմանափակելով թիվ 77/91/ԵՏՀ հրահանգի 22(1)(բ) հոդվածի գործողությունը:

3. Կանոնադրությամբ նախատեսված պահուստներ

4. Այլ պահուստներ

V. Հաջորդ ժամանակահատվածի հաշվապահական հաշվեկշիռ փոխանցված շահույթ կամ վնաս

VI. Ֆինանսական տարվա շահույթ կամ վնաս

(բացառությամբ, եթե ազգային իրավունքը չի նախատեսում, որ այս հոդվածը նշվի Զ-ի՝ «Ակտիվներ»-ում կամ Ե-ի «Պարտավորություններ»-ում):

B. ► M10 Պահուստները ◀

1. Թոշակների և նմանատիպ պարտավորությունների գծով պահուստներ:
2. Հարկերի գծով պահուստներ:
3. Այլ դրույթներ:

Գ. Կրեդիտորական պարտքերը

(Գումարները, որոնց մարման ժամկետը չի գերազանցում մեկ տարին և այն գումարները, որոնց մարման ժամկետը գերազանցում է մեկ տարին, պետք է առանձին–առանձին նշվեն յուրաքանչյուր հոդվածի, ինչպես նաև դրանց հանրագումարի համար):

1. Պարտավորագրով վարկեր՝ առանձին նշելով փոխարկելի վարկերը:
2. Վարկային հաստատություններին վճարման ենթակա պարտքի գումարներ:
3. Պատվերների հաշվին ստացված վճարումներ, եթե դրանք առանձին ցույց տրված չեն որպես բաժնետոմսերից մասհանում:
4. Առևտրային կրեդիտորական պարտքեր:
5. Վճարման ենթակա փոխանցելի մուրհակներ:
6. Պարտքեր փոխկապակցված կազմակերպություններին:
7. Պարտքեր այն կազմակերպություններին, որոնց հետ ընկերությունը կապված է մասնակցության մասնաբաժինների միջոցով:
8. Այլ կրեդիտորական պարտքեր, այդ թվում՝ հարկային պարտավորություններ և սոցիալական ապահովության վճարներ:
9. Հետաձգված ծախսեր և եկամուտներ (բացառությամբ, եթե ազգային իրավունքը չի նախատեսում, որ դրանք նշվեն Դ-ի «Պարտավորություններ»-ում):

Դ. Հետաձգված ծախսեր և եկամուտներ

(բացառությամբ, եթե ազգային իրավունքը չի նախատեսում, որ դրանք նշվեն Գ «9»-ի՝ «Պարտավորություններ»-ում):

Ե. Ֆինանսական տարվա շահույթ

(բացառությամբ, եթե ազգային իրավունքը չի նախատեսում, որ այն նշվի Ա «VI»-ի՝ «Պարտավորություններ»-ում):

Հոդված 10

Ա. Զվճարված տեղաբաշխված կապիտալ, որից հետ է կանչվել

(բացառությամբ, եթե ազգային իրավունքը չի նախատեսում, որ հետ կանչված կապիտալը նշվի ԺԲ-ում: Այդ դեպքում հետ կանչված, բայց դեռևս չվճարված կապիտալի մի մասը պետք է նշվի կամ Ա-ում, կամ Դ (11)(5)-ում):

Բ. Հիմնադրման ծախսերը

Ինչպես սահմանված է ազգային իրավունքով և այնքանով, որքանով ազգային իրավունքը թույլ է տալիս, որ դրանք նշվեն որպես ակտիվ: Ազգային իրավունքը կարող է նաև նախատեսել, որ հիմնադրման ծախսերը նշվեն որպես «Ոչ նյութական ակտիվներ»-ի առաջին հոդված:

Գ. Հիմնական միջոցներ

I. Ոչ նյութական ակտիվներ

1. Գիտահետազոտական և նախագծային աշխատանքների հետ կապված ծախսերն այնքանով, որքանով ազգային իրավունքը թույլատրում է, որ դրանք նշվեն որպես ակտիվ:

2. Կոնցեսիաներ, արտոնագրեր, լիցենզիաներ, առևտրային նշաններ և նմանատիպ իրավունքներ ու ակտիվներ, եթե դրանք՝

ա) ձեռք են բերվել արժեքավոր փոխհատուցմամբ և կարիք չկա, որ նշվեն Գ(Ի)(3)-ում, կամ

բ) ստեղծվել են կազմակերպության իսկ կողմից՝ այնքանով, որքանով ազգային իրավունքը թույլատրում է, որ դրանք նշվեն որպես ակտիվ:

3. Գուդվիլ՝ այնքանով, որքանով այն ձեռք է բերվել արժեքավոր փոխհատուցմամբ:

4. Տարածամկետ վճարումներ:

II. Նյութական ակտիվներ

1. Հող և շենքեր:

2. Կառուցվածքներ և մեքենա-մեխանիզմներ:

3. Այլ շինություններ և կահավորանք, գործիքներ և սարքավորումներ:

4. Տարածամկետ վճարումներ և շինարարության ընթացքի մեջ գտնվող նյութական ակտիվներ:

III. Ֆինանսական ակտիվներ

1. Փոխկապակցված կազմակերպություններում բաժնետոմսերը:

2. Փոխկապակցված կազմակերպություններին տրված վարկերը:

3. Մասնակցության մասնաբաժինները

4. Վարկեր այն կազմակերպություններին, որոնց հետ ընկերությունը կապված է մասնակցության մասնաբաժինների միջոցով:

5. Որպես հիմնական միջոցներ դիտարկվող ներդրումներ:

6. Այլ վարկեր:

7. Սեփական բաժնետոմսեր (դրանց անվանական արժեքի կամ, անվանական արժեքի բացակայության դեպքում՝ հաշվապահական հաշվեկշռում արտացոլված անվանական արժեքի նշումով), եթե ազգային իրավունքը թույլ է տալիս, որ դրանք նշվեն հաշվապահական հաշվեկշռում:

Դ. Ընթացիկ ակտիվներ

I. Շրջանառու միջոցներ

1. Հումք և արագամաշ առարկաներ:
2. Ընթացիկ աշխատանքներ:
3. Պատրաստի արտադրանք և ապրանքներ՝ վերավաճառքի համար:
4. Տարածամկետ վճարումներ:

II. Դեբիտորական պարտքեր

(Գումարներ, որոնց մարման ժամկետը գերազանցում է մեկ տարին, պետք է առանձին նշվեն յուրաքանչյուր հոդվածի համար:)

1. Առևտրային դեբիտորական պարտքեր
2. Փոխկապակցված կազմակերպությունների պարտքերի գումարներ:
3. Այն կազմակերպությունների պարտքերը, որոնց հետ ընկերությունը կապված է մասնակցության մասնաբաժինների միջոցով:
4. Այլ դեբիտորական պարտքեր:
5. Հետ կանչված, բայց չվճարված տեղաբաշխված կապիտալ (բացառությամբ, եթե ազգային իրավունքը նախատեսում է, որ կանչված կապիտալը Ա-ում նշվի որպես ակտիվ):
6. Կանխավճարներ և կուտակված եկամուտ (բացառությամբ, եթե ազգային իրավունքը նախատեսում է, որ դրանք նշվեն Ե-ում):

III. Ներդրումներ

1. Փոխկապակցված կազմակերպություններում բաժնետոմսերը»:
2. Սեփական բաժնետոմսեր (դրանց անվանական արժեքի կամ, անվանական արժեքի բացակայության դեպքում՝ հաշվապահական հաշվեկշռում արտացոլված անվանական արժեքի նշումով), եթե ազգային իրավունքը թույլ է տալիս, որ դրանք նշվեն հաշվապահական հաշվեկշռում:
3. Այլ ներդրումներ:

IV. Դրամական միջոցներ հաշիվներում և կանխիկը:

Ե. Կանխավճարներ և կուտակված եկամուտ

(բացառությամբ, եթե ազգային իրավունքը նախատեսում է, որ այդ հոդվածները նշվեն Դ(II)(6)-ում):

Զ. Կրեդիտորական պարտքեր. գումարներ, որոնց մարման ժամկետը չի գերազանցում մեկ տարին

1. Պարտավորագրով վարկեր՝ առանձին նշելով փոխարկելի վարկերը:
2. Վարկային հաստատություններին վճարման ենթակա պարտքի գումարներ:
3. Պատվերների հաշվին ստացված վճարումներ, եթե դրանք առանձին ցույց տրված չեն որպես բաժնետոմսերից մասհանում:
4. Առևտրային կրեդիտորական պարտքեր:
5. Վճարման ենթակա փոխանցելի մուրհակներ:
6. Պարտքեր փոխկապակցված կազմակերպություններին:
7. Պարտքեր այն կազմակերպություններին, որոնց հետ ընկերությունը կապված է մասնակցության մասնաբաժինների միջոցով:
8. Այլ կրեդիտորական պարտքեր, այդ թվում՝ հարկային պարտավորություններ և սոցիալական ապահովության վճարներ:
9. Հետաձգված ծախսեր և եկամուտներ (բացառությամբ, երբ ազգային իրավունքը նախատեսում է, որ դրանք նշվեն ԺԱ-ում):

Է. **Զուտ ընթացիկ ակտիվներ/պարտավորություններ** (հաշվի առնելով կանխավճարները և կուտակված եկամուտը, եթե դրանք նշված են Ե-ում և հետաձգված ծախսերն ու եկամուտները, եթե նշված են ԺԱ-ում):

Ը. Ընդհանուր ակտիվներից հանած ընթացիկ պարտավորություններ:

Թ. Կրեդիտորական պարտքեր. գումարներ, որոնց մարման ժամկետը գերազանցում է մեկ տարին:

1. Պարտավորագրով վարկեր՝ առանձին նշելով փոխարկելի վարկերը:
2. Վարկային հաստատություններին վճարման ենթակա պարտքի գումարներ:
3. Պատվերների հաշվին ստացված վճարումներ, եթե դրանք առանձին ցույց տրված չեն որպես բաժնետոմսերից մասհանում:
4. Առևտրային կրեդիտորական պարտքեր:
5. Վճարման ենթակա փոխանցելի մուրհակներ:
6. Պարտքեր փոխկապակցված կազմակերպություններին:
7. Պարտքեր այն կազմակերպություններին, որոնց հետ ընկերությունը կապված է մասնակցության մասնաբաժինների միջոցով:
8. Այլ կրեդիտորական պարտքեր, այդ թվում՝ հարկային պարտավորություններ և սոցիալական ապահովության վճարներ:
9. Հետաձգված ծախսեր և եկամուտներ (բացառությամբ, երբ ազգային իրավունքը նախատեսում է, որ դրանք նշվեն ԺԱ-ում):

Ժ. ► M10 Պահուստները ◀

1. Թոշակների և նմանատիպ պարտավորությունների գծով պահուստներ:
2. Հարկերի գծով պահուստներ:
3. Այլ դրույթներ:

ԺԱ. Հետաձգված ծախսեր և եկամուտներ

(բացառությամբ, երբ ազգային իրավունքը նախատեսում է, որ այն նշվի Զ (9)-ում կամ Թ (9)-ում կամ երկուսում էլ:

ԺԲ. Կապիտալ և պահուստներ

I. Տեղաբաշխված կապիտալ

(բացառությամբ, երբ ազգային իրավունքը նախատեսում է, որ կանչված կապիտալը նշվի այս հոդվածում: , Տեղաբաշխված կապիտալի և վճարված կապիտալի գումարներն այդ դեպքում պետք է նշվեն առանձին-առանձին):

II. Էմիսիոն եկամուտ

III. Վերազնահատման պահուստ

IV. Պահուստներ

1. Օրենքով նախատեսված (պարտադիր) պահուստ՝ այնքանով, որքանով ազգային իրավունքը նման պահուստ է պահանջում:

2. Սեփական բաժնետոմսերի պահուստ՝ այնքանով, որքանով ազգային իրավունքը նման պահուստ է պահանջում՝ չսահմանափակելով թիվ 77/91/ԵՏՀ հրահանգի հոդված 22(1)(բ)-ի գործողությունը:

3. Կանոնադրությամբ նախատեսված պահուստներ:

4. Այլ պահուստներ:

V. Հաջորդ ժամանակահատվածի հաշվապահական հաշվեկշիռ փոխանցված շահույթ կամ վնաս

VI. Ֆինանսական տարվա շահույթ կամ վնաս:

▼ M10

Հոդված 10ա

9-րդ և 10-րդ հոդվածների համաձայն, հաշվապահական հաշվեկշռի հոդվածները ներկայացնելու փոխարեն, անդամ պետությունները կարող են թույլատրել կամ պահանջել, որ ընկերությունները կամ որոշակի տեսակի ընկերությունները ներկայացնեն այդ հոդվածները ընթացիկ և ոչ ընթացիկ հոդվածների միջև տարբերության հիման վրա՝ պայմանով, որ ներկայացված տեղեկություններն առնվազն համարժեք են 9-րդ և 10-րդ հոդվածներով այլ կերպ պահանջվող տեղեկություններին:

▼ B

Հոդված 11

Անդամ պետությունները կարող են թույլատրել ընկերություններին, որոնք իրենց հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ չեն անցնում հետևյալ երեք չափորոշիչից երկուսի սահմանը՝

- ►M12 ընդհանուր հաշվապահական հաշվեկշիռ՝ 4 400 000 եվրո:
- ►M12 գույքի շրջանառություն՝ 8 800 000 եվրո:
- ֆինանսական տարվա ընթացքում աշխատողների միջին թիվը՝ 50

կազմել համառոտ հաշվապահական հաշվեկշիռ՝ ցույց տալով միայն այն հոդվածները, որոնց 9-րդ և 10-րդ հոդվածներում նախորդում են տառեր և հռոմեական թվեր, առանձին-առանձին բացահայտելով 9-րդ հոդվածի «Ակտիվներ»-ի Դ«II»-ում և «Պարտավորություններ»-ի Գ-ում և 10-րդ հոդվածի Դ«II»-ում փակագծերում պահանջվող տեղեկատվությունը, բայց յուրաքանչյուրի համար՝ հանրագումարով:

▼M4

Անդամ պետությունները կարող են չլիբառել 15 (3) (ա) և (4) հոդվածը համառոտ հաշվապահական հաշվեկշռի նկատմամբ:

▼M9

Եվրոն չընդունած անդամ պետությունների դեպքում առաջին պարբերության մեջ սահմանված գումարին համարժեք ազգային արժույթով արտահայտված գումարը պետք է լինի այն գումարը, որն ստացվում է Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակված փոխարժեքի կիրառմամբ՝ այդ գումարների չափը սահմանող ցանկացած հրահանգն ուժի մեջ մտնելու օրը՝ M12:

▼B

Հոդված 12

1. Եթե հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ընկերությունը գերազանցում է կամ դադարում է գերազանցել 11-րդ հոդվածում նշված երեք չափորոշիչից երկուսի սահմանը, այդ փաստն ազդում է այդ հոդվածով նախատեսված շեղումը կիրառելու վրա, միայն եթե դա տեղի է ունենում երկու հաջորդական ֆինանսական տարիների ընթացքում:

2. Ազգային արժույթով արտահայտելու նպատակով, 11-րդ հոդվածում նշված Եվրոպական հաշվարկային միավորով գումարները կարող են ավելացվել ոչ ավելի, քան 10 տոկոսի չափով:

3. 11-րդ հոդվածում նշված ընդհանուր հաշվապահական հաշվեկշիռը բաղկացած է 9-րդ հոդվածով սահմանված կառուցվածքի «Ակտիվներ»-ի Ա-ից Ե-ում ընդգրկված ակտիվներից կամ 10-րդ հոդվածով սահմանված կառուցվածքի Ա-ից Ե-ում ընդգրկված ակտիվներից:

Հոդված 13

1. Եթե ակտիվը կամ պարտավորությունը վերաբերում է կառուցվածքի մեկից ավելի հոդվածներին, դրա հարաբերությունը մյուս հոդվածների հետ պետք է բացահայտվի կամ այն հոդվածում, որտեղ այն առկա է կամ հաշվետվություններին կից ծանոթագրություններում, եթե նման տեղեկատվությունն էական է տարեկան ֆինանսական հաշվետվությունները հասկանալու համար:

2. Սեփական բաժնետոմսերը և փոխկապակցված կազմակերպություններում բաժնետոմսերը կարող են նշվել միայն այդ նպատակի համար սահմանված հոդվածներում:

Հոդված 14

Ցանկացած երաշխիքով ապահովված բոլոր պարտավորվածությունները, եթե պարտադիր չէ, որ դրանք նշվեն պարտավորությունների տակ, պետք է պարզորոշ առանձնացվեն հաշվապահական հաշվեկշռի տողատակում կամ հաշվետվություններին կից ծանոթագրություններում, և պետք է տարբերակվեն ազգային իրավունքով սահմանված տարատեսակ երաշխիքները. հատուկ բացահայտում պետք է կատարվի ցանկացած տրամադրված արժեքավոր ապահովման միջոցի մասին: Փոխկապակցված կազմակերպությունների առնչությամբ առկա նմանատիպ պարտավորվածությունները պետք է առանձին նշվեն :

ՄԱՍ 4

Հատուկ դրույթներ՝ հաշվապահական հաշվեկշռի որոշ հոդվածների վերաբերյալ

Հոդված 15

1. Այն հանգամանքը, թե արդյոք որոշակի ակտիվներ նշվում են որպես հիմնական միջոցներ թե ընթացիկ ակտիվներ, կախված է նպատակից, որի համար դրանք նախատեսված են:
2. Հիմնական միջոցները բաղկացած են այն ակտիվներից, որոնք նախատեսված են կազմակերպության գործունեության նպատակով շարունակական օգտագործման համար.
3.
 - ա) Հիմնական միջոցների տարբեր հոդվածների միջև շարժը պետք է արտացոլվի հաշվապահական հաշվեկշռում կամ հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Այդ նպատակով, մի կողմից պետք է, սկսած ձեռքբերման գնից կամ ինքնարժեքից, առանձին–առանձին արտացոլվեն հիմնական միջոցներից յուրաքանչյուրի մասով ավելացումները, օտարումները և փոխանցումները՝ ֆինանսական տարվա ընթացքում, մյուս կողմից՝ կուտակային արժեքի ճշգրտումները հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ և ֆինանսական տարվա ընթացքում նախորդ ֆինանսական տարիներին արժեքի ճշգրտումներում կատարված ուղղումները: Արժեքի ճշգրտումները երևում են կամ հաշվապահական հաշվեկշռում՝ որպես համապատասխան հոդվածներից հստակ նվազեցումներ, կամ հաշվետվություններին կից ծանոթագրություններում:
 - բ) Եթե, տարեկան ֆինանսական հաշվետվությունները սույն Հրահանգին համապատասխան առաջին անգամ կազմելիս հիմնական միջոցի ձեռքբերման գինը կամ ինքնարժեքը չի կարող որոշվել առանց անտեղի ծախսերի կամ ուշացման, ապա ֆինանսական տարվա սկզբի մնացորդային արժեքը կարող է դիտարկվել որպես ձեռքբերման գին կամ ինքնարժեք: Սույն դրույթի ցանկացած կիրառում պետք է բացահայտվի հաշվետվություններին կից ծանոթագրություններում:
 - գ) Եթե կիրառվում է 33-րդ հոդվածը, սույն պարբերության «ա» ենթապարբերության մեջ նշված հիմնական միջոցների տարբեր հոդվածների շարժը նշվում է՝ սկսած ձեռքբերման գնից կամ վերագնահատման արդյունքում ձևավորված ինքնարժեքից:
4. 3(ա) և (բ) պարբերությունը կիրառվում է «Հիմնադրման ծախսերը» ներկայացնելու նկատմամբ:

Հոդված 16

Ազգային իրավունքով սահմանված՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքները և նմանատիպ մյուս իրավունքները պետք է արտացոլվեն «Հող և շենքեր»-ում:

Հոդված 17

Սույն Հրահանգի իմաստով՝ «մասնակցության մասնաբաժին» նշանակում է հավաստագրով արտահայտված կամ չարտահայտված իրավունք այլ կազմակերպությունների կապիտալում, որոնք, այդ կազմակերպությունների հետ կայուն կապ ստեղծելով, ուղղված են ընկերության գործունեությանը նպաստելուն: Մեկ այլ ընկերության կապիտալի մասի նկատմամբ սեփականությունը մասնակցության մասնաբաժին է համարվում, եթե այն գերազանցում է անդամ պետության կողմից ամրագրված տոկոսը, որը չի կարող գերազանցել 20%-ը:

Հոդված 18

Տվյալ ֆինանսական տարվա ընթացքում առաջացած, սակայն հաջորդ ֆինանսական տարվան վերաբերող ծախսերը, ցանկացած եկամտի հետ միասին, որը չնայած վերաբերում է տվյալ ֆինանսական տարվան, վճարման ենթակա չէ՝ մինչև դրա ավարտը, պետք է նշվեն «Կանխավճարներ և կուտակված եկամուտ»-ում: Այնուամենայնիվ, անդամ պետությունները կարող են նախատեսել, որ նման եկամուտն ընդգրկվի «Դեբիտորական պարտքեր»-ում: Եթե նման եկամուտն էական է, այն պետք է բացահայտվի հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

Հոդված 19

Արժեքի ճշգրտումները ներառում են բոլոր այն շտկումները, որոնք նախատեսված են՝ հաշվի առնելու համար հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ հաստատված անհատական ակտիվների արժեքների նվազեցումները՝ անկախ այն բանից, թե այդ նվազեցումը վերջնական է, թե՛ ոչ:

▼B

Հոդված 20

▼M10

1. Պահուստները նախատեսված են ծածկելու այն վնասներն ու պարտքերը, որոնց բնույթը հստակ սահմանված է և որոնք, հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ, հավանաբար կառաջանան կամ հաստատ կառաջանան, բայց որոնց գումարի չափը կամ առաջացման ամսաթիվն անորոշ է:

▼B

2. Անդամ պետությունները կարող են նաև թույլ տալ ստեղծել պահուստներ, որոնց նպատակը ծածկելն է գանձումները, որոնք ծագել են հաշվետու ֆինանսական տարվա կամ նախորդ ֆինանսական տարվա ընթացքում, որոնց բնույթը հստակ սահմանված է և որոնք հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ հավանաբար կառաջանան կամ հաստատ կառաջանան, բայց որոնց գումարի չափը և առաջացման ամսաթիվն անորոշ է:

▼M10

3. Պահուստները չեն կարող օգտագործվել՝ ակտիվների արժեքները ճշգրտելու համար:

▼B

Հոդված 21

Նախքան հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը, ստացման ենթակա եկամուտը, որը սակայն վերաբերում է հաջորդ ֆինանսական տարվան, որևէ այլ գանձումների հետ միասին, որոնք չնայած վերաբերում են տվյալ ֆինանսական տարվան, բայց պետք է վճարվեն միայն հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում, պետք է նշվեն «Հետաձգված ծախսեր և եկամուտներ»-ում: Այնուամենայնիվ, անդամ պետությունները կարող են նախատեսել, որ նման գանձումներն ընդգրկվեն «Կրեդիտորական պարտքեր»-ում: Եթե նման գանձումներն էական են, դրանք պետք է բացահայտվեն հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

ԲԱԺԻՆ 5

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության կառուցվածքը

Հոդված 22

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը ներկայացնելու համար անդամ պետությունները ներկայացնում են 23-26-րդ հոդվածներով նախատեսված կառուցվածքներից մեկը կամ մի քանիսը: Եթե անդամ պետությունը նախատեսում է մեկից ավելի կառուցվածք, ապա ընկերություններին հնարավորություն է տրվում ընտրություն կատարելու դրանց միջև:

▼M10

Շեղում կատարելով 2(1) հոդվածից՝ անդամ պետությունները կարող են թույլատրել կամ պահանջել, որ բոլոր ընկերությունները կամ ցանկացած դասի ընկերություն իրենց կատարողականի մասին հաշվետվություն ներկայացնի «ֆինանսական արդյունքներ» հոդվածների փոխարեն՝ 23-րդ և 26-րդ հոդվածների համաձայն՝ պայմանով, որ ներկայացված տեղեկություններն առնվազն համարժեք լինեն այդ հոդվածներով այլ կերպ պահանջվող տեղեկություններին:

▼B

Հոդված 23

1. Զուտ շրջանառություն:
2. Պատրաստի արտադրանքի պաշարների և ընթացիկ աշխատանքների միջև տարբերություն:
3. Կազմակերպության կողմից սեփական նպատակների համար կատարված և կապիտալացված աշխատանք:
4. Այլ գործառնական եկամուտ.
5. ա) Հումք և սպառվող նյութեր:
բ) Այլ արտաքին գանձումներ:
6. Հաշվարկներ անձնակազմի հետ.
ա) աշխատավարձ.
բ) սոցիալական ապահովության վճարներ՝ առանձին նշելով կենսաթոշակային հատկացումները:
7. ա) Արժեքի ճշգրտումներ՝ հիմնադրման ծախսերի, նյութական և ոչ նյութական հիմնական միջոցների գծով:

բ) Արժեքի ճշգրտումներ ընթացիկ ակտիվների գծով՝ այնքանով, որքանով դրանք գերազանցում են տվյալ կազմակերպությունում ընդունված արժեքի ճշգրտումների նորման:

8. Այլ գործառնական գանձումներ:

9. Եկամուտ մասնակցության մասնաբաժնից՝ առանձին նշելով փոխկապակցված կազմակերպություններից ստացված եկամուտը:

10. Եկամուտ հիմնական միջոցների մաս կազմող փոխառություններից և ներդրումներից՝ առանձին նշելով փոխկապակցված կազմակերպություններից ստացված եկամուտը:

11. Ստացման ենթակա այլ տոկոսավճարներ և նմանատիպ եկամուտ՝ առանձին նշելով փոխկապակցված կազմակերպություններից ստացված եկամուտը:

12. Արժեքի ճշգրտում՝ ֆինանսական ակտիվների և որպես ընթացիկ ակտիվներ պահվող ներդրումների գծով:

13. Վճարվելիք տոկոսավճարներ և նմանատիպ գանձումներ՝ առանձին նշելով փոխկապակցված կազմակերպություններին վերաբերող գանձումները:

14. Շահութահարկ կամ հիմնական գործունեությունից առաջացած վնաս:

15. Հիմնական գործունեությունից առաջացած վնաս կամ շահույթ՝ հարկումից հետո:

16. Արտափրացումային եկամուտ:

17. Արտափրացումային գանձումներ:

18. Արտափրացումային շահույթ կամ վնաս:

19. Արտափրացումային շահույթից գանձվող հարկ կամ վնաս:

20. Այլ հարկեր, որոնք նշված չեն վերոհիշյալ հոդվածներում:

21. Ֆինանսական տարվա շահույթ կամ վնաս:

Հոդված 24

Ա. Գանձումներ

1. Նվազեցում պատրաստի արտադրանքի պաշարներից և ընթացիկ աշխատանքներից.

2. ա) հումք և սպառվող նյութեր.

բ) այլ արտաքին գանձումներ:

3. Հաշվարկներ անձնակազմի հետ.

ա) աշխատավարձ.

բ) սոցիալական ապահովության վճարներ՝ առանձին նշելով կենսաթոշակային հատկացումները:

4. ա) Արժեքի ճշգրտումներ՝ հիմնադրման ծախսերի, նյութական և ոչ նյութական հիմնական միջոցների գծով:

բ) Արժեքի ճշգրտումներ՝ ընթացիկ ակտիվների գծով՝ այնքանով, որքանով դրանք գերազանցում են տվյալ կազմակերպությունում ընդունված արժեքի ճշգրտումների նորման:

5. Այլ գործառնական գանձումներ:
6. Արժեքի ճշգրտում՝ ֆինանսական ակտիվների և որպես ընթացիկ ակտիվներ պահվող ներդրումների գծով:
7. Վճարվելիք տոկոսավճարներ և նմանատիպ գանձումներ՝ առանձին նշելով փոխկապակցված կազմակերպություններին վերաբերող գանձումները:
8. Շահութահարկ կամ հիմնական գործունեությունից առաջացած վնաս:
9. Հիմնական գործունեությունից առաջացած վնաս կամ շահույթ՝ հարկումից հետո;
10. Արտափրացումային գանձումներ:
11. Արտափրացումային շահույթից գանձվող հարկ կամ վնաս:
12. Այլ հարկեր, որոնք նշված չեն վերոհիշյալ հոդվածներում:
13. Ֆինանսական տարվա շահույթ կամ վնաս:

Բ. Եկամուտ

1. Զուտ շրջանառություն
2. Պատրաստի արտադրանքի պաշարների և ընթացիկ աշխատանքների գծով ավելացում:
3. Կազմակերպության կողմից սեփական նպատակների համար կատարված և կապիտալացված աշխատանք:
4. Այլ գործառնական եկամուտ:
5. Եկամուտ մասնակցության մասնաբաժնից՝ առանձին նշելով փոխկապակցված կազմակերպություններից ստացված եկամուտը:
6. Եկամուտ հիմնական միջոցների մաս կազմող փոխառություններից և ներդրումներից՝ առանձին նշելով փոխկապակցված կազմակերպություններից ստացված եկամուտը:
7. Ստացման ենթակա այլ տոկոսավճարներ և նմանատիպ եկամուտ՝ առանձին նշելով փոխկապակցված կազմակերպություններից ստացված եկամուտը:
8. Հիմնական գործունեությունից առաջացած վնաս կամ շահույթ՝ հարկումից հետո:
9. Արտափրացումային եկամուտ:
10. Ֆինանսական տարվա շահույթ կամ վնաս:

Հոդված 25

1. Զուտ շրջանառություն:
2. Իրացման ինքնարժեք (ներառյալ արժեքի ճշգրտումները);
3. Համախառն շահույթ կամ վնաս:
4. Իրացման ծախսեր (ներառյալ արժեքի ճշգրտումները);
5. Վարչական ծախսեր (ներառյալ արժեքի ճշգրտումները):

6. Այլ գործառնական եկամուտ:

7. Եկամուտ մասնակցության մասնաբաժնից՝ առանձին նշելով փոխկապակցված կազմակերպություններից ստացված եկամուտը:

8. Եկամուտ հիմնական միջոցների մաս կազմող փոխառություններից և ներդրումներից՝ առանձին նշելով փոխկապակցված կազմակերպություններից ստացված եկամուտը:

9. Ստացման ենթակա այլ տոկոսավճարներ և նմանատիպ եկամուտ՝ առանձին նշելով փոխկապակցված կազմակերպություններից ստացված եկամուտը:

10. Արժեքի ճշգրտում՝ ֆինանսական ակտիվների և որպես ընթացիկ ակտիվներ պահվող ներդրումների գծով:

11. Վճարվելիք տոկոսավճարներ և նմանատիպ գանձումներ՝ առանձին նշելով փոխկապակցված կազմակերպություններին վերաբերող գանձումները:

12. Շահութահարկ կամ հիմնական գործունեությունից առաջացած վնաս:

13. Հիմնական գործունեությունից առաջացած վնաս կամ շահույթ՝ հարկումից հետո:

14. Արտախրացումային եկամուտ:

15. Արտախրացումային գանձումներ:

16. Արտախրացումային շահույթ կամ վնաս:

17. Արտախրացումային շահույթից գանձվող հարկ կամ վնաս:

18. Այլ հարկեր, որոնք նշված չեն վերոհիշյալ հոդվածներում:

19. Ֆինանսական տարվա շահույթ կամ վնաս:

Հոդված 26

Ա. Գանձումներ

1. Իրացման ինքնարժեք (ներառյալ արժեքի ճշգրտումները):

2. Իրացման ծախսեր (ներառյալ արժեքի ճշգրտումները):

3. Վարչական ծախսեր (ներառյալ արժեքի ճշգրտումները):

4. Արժեքի ճշգրտում՝ ֆինանսական ակտիվների և որպես ընթացիկ ակտիվներ պահվող ներդրումների գծով:

5. Վճարվելիք տոկոսավճարներ և նմանատիպ գանձումներ՝ առանձին նշելով փոխկապակցված կազմակերպություններին վերաբերող գանձումները:

6. Շահութահարկ կամ հիմնական գործունեությունից առաջացած վնաս:

7. Հիմնական գործունեությունից առաջացած վնաս կամ շահույթ՝ հարկումից հետո:

8. Արտախրացումային գանձումներ:

9. Արտախրացումային շահույթից գանձվող հարկ կամ վնաս:

10. Այլ հարկեր, որոնք նշված չեն վերոհիշյալ հոդվածներում:

11. Ֆինանսական տարվա շահույթ կամ վնաս:

Բ. Եկամուտ

1. Զուտ շրջանառություն:
2. Այլ գործառնական եկամուտ:
3. Եկամուտ մասնակցության մասնաբաժնից՝ առանձին նշելով փոխկապակցված կազմակերպություններից ստացված եկամուտը:
4. Եկամուտ հիմնական միջոցների մաս կազմող փոխառություններից և ներդրումներից՝ առանձին նշելով փոխկապակցված կազմակերպություններից ստացված եկամուտը:
5. Ստացման ենթակա այլ տոկոսավճարներ և նմանատիպ եկամուտ՝ առանձին նշելով փոխկապակցված կազմակերպություններից ստացված եկամուտը:
6. Հիմնական գործունեությունից առաջացած վնաս կամ շահույթ՝ հարկումից հետո:
7. Արտաիրացումային եկամուտ:
8. Ֆինանսական տարվա շահույթ կամ վնաս:

Հոդված 27

Անդամ պետությունները կարող են թույլատրել ընկերություններին, որոնք իրենց հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ չեն անցնում հետևյալ երեք չափորոշիչից երկուսի սահմանը՝

- ►M12 ընդհանուր հաշվապահական հաշվեկշիռ՝ 17 500 000 եվրո.
- ►M12 գուտ շրջանառություն՝ 35 000 000 եվրո:
- Ֆինանսական տարվա ընթացքում աշխատողների միջին թիվը. 250

ընդունել 23-26-րդ հոդվածներում սահմանված կառուցվածքներից տարբերվող կառուցվածքներ հետևյալ սահմաններում.

- ա) 23-րդ հոդվածում՝ 1-5-ը ներառյալ կարող են խմբավորվել մեկ հոդվածում՝ «Համախառն շահույթ կամ վնաս» անվանմամբ.
- բ) 24-րդ հոդվածում՝ Ա(1), Ա(2) և Բ(1)–Բ(4)–ը ներառյալ կարող են համախմբվել մեկ հոդվածում՝ «Համախառն շահույթ կամ վնաս» անվանմամբ.
- գ) 25-րդ հոդվածում՝ (1), (2), (3) և (6)–ը կարող են համախմբվել մեկ հոդվածում՝ «Համախառն շահույթ կամ վնաս» անվանմամբ.
- դ) 26-րդ հոդվածում՝ Ա(1), Բ(1) և Բ(2)–ը կարող են համախմբվել մեկ հոդվածում՝ «Համախառն շահույթ կամ վնաս» անվանմամբ:

Կիրառվում է 12-րդ հոդվածը:

▼M9

Եվրոն չընդունած անդամ պետությունների դեպքում, առաջին պարբերության մեջ սահմանված գումարին համարժեք ազգային արժույթով արտահայտված գումարը պետք է լինի այն գումարը, որն ստացվում է Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակված փոխարժեքի կիրառմամբ՝ այդ գումարների չափը սահմանող ցանկացած հրահանգ ուժի մեջ մտնելու օրը՝ M12:

ԲԱԺԻՆ 6

Հատուկ դրույթներ՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության որոշ հոդվածների վերաբերյալ*Հոդված 28*

Զուտ շրջանառությունը ներառում է ապրանքների վաճառքից և ընկերության հիմնական գործունեության շրջանակներում մատուցվող ծառայություններից ստացված գումարները՝ հանած վաճառքի զեղչերը, ավելացված արժեքի հարկը և շրջանառությանն անմիջականորեն վերաբերող մյուս հարկերը:

Հոդված 29

1. Ընկերության հիմնական գործունեությունից դուրս առաջացող եկամուտները և գանձումները պետք է արտացոլվեն «Արտափրացումային եկամուտ և արտափրացումային գանձումներ»-ում:
2. Բացառությամբ, երբ 1-ին պարբերության մեջ նշված եկամուտը և գանձումներն էական չեն արդյունքների գնահատման համար, դրանց գումարի և բնույթի մասին մեկնաբանություններ են տրվում հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Նույնը վերաբերում է նաև մեկ այլ ֆինանսական տարվան վերաբերող եկամտին և գանձումներին:

Հոդված 30

Անդամ պետությունները կարող են թույլատրել, որ շահութահարկը կամ հիմնական գործունեությունից առաջացած վնասը, ինչպես նաև արտափրացումային շահույթից գանձվող հարկերը կամ վնասը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ հանրագումարով ցույց տրվեն որպես մեկ հոդված՝ «Այլ հարկեր, որոնք նշված չեն վերը նշված հոդվածներում» հոդվածից առաջ: Այդ դեպքում, «Հիմնական գործունեությունից առաջացած վնաս կամ շահույթ՝ հարկումից հետո» հոդվածը չի նշվում 23-26-րդ հոդվածներում սահմանված կառուցվածքներում:

Եթե կիրառվում է այս շեղումը, ընկերությունները պետք է հաշվետվություններին կից ծանոթագրություններում բացահայտեն, թե որքանով են շահութահարկը կամ վնասն ազդում հիմնական գործունեությունից առաջացած շահույթի կամ վնասի և «Արտափրացումային շահույթի կամ վնասի» վրա:

ԲԱԺԻՆ 7

Գնահատման կանոններ*Հոդված 31*

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն տարեկան ֆինանսական հաշվետվությունների մեջ նշված հոդվածների գնահատումը հետևյալ ընդհանուր սկզբունքների համաձայն.

ա) ենթադրվում է, որ ընկերությունը պետք է իր գործունեությունն իրականացնի որպես կենսունակ ձեռնարկություն.

բ) գնահատման մեթոդները պետք է հետևողականորեն կիրառվեն մեկ ֆինանսական տարվանից մյուսը.

գ) գնահատումը պետք է կատարվի շրջահայացորեն և, մասնավորապես՝

աա) կարող է ներառվել միայն հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ստացված շահույթը.

▼M10

բբ) պետք է հաշվի առնվեն տվյալ կամ նախորդ ֆինանսական տարվա ընթացքում առաջացող բոլոր պարտավորությունները, եթե նույնիսկ նման պարտավորությունները և վնասներն ակնհայտ են դառնում հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի ու այն կազմելու ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածում.

▼B

գգ) պետք է հաշվի առնվի ամբողջ մաշվածությունը՝ անկախ այն բանից, թե ֆինանսական տարվա արդյունքը վնաս է, թե շահույթ.

դ) պետք է հաշվի առնվեն ֆինանսական տարվան վերաբերող եկամուտը և գանձումները՝ անկախ նման եկամտի ստացման կամ վճարների կատարման ամսաթվից.

ե) ակտիվների և պարտավորությունների հոդվածների բաղադրիչները պետք է գնահատվեն առանձին-առանձին.

զ) յուրաքանչյուր ֆինանսական տարվա սկզբնական հաշվապահական հաշվեկշիռը պետք է համընկնի նախորդ ֆինանսական տարվա վերջնական հաշվապահական հաշվեկշռի հետ:

▼M10

1ա) Ի լրումն (1)(գ)(իը) պարբերությանը համաձայն սահմանված գումարների՝ անդամ պետությունները կարող են թույլատրել կամ պահանջել, որ հաշվի առնվեն տվյալ կամ նախորդ ֆինանսական տարվա ընթացքում առաջացող բոլոր կանխատեսելի պարտավորությունները և հնարավոր վնասները, եթե նույնիսկ նման պարտավորությունները և վնասներն ակնհայտ են դառնում հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի ու այն կազմելու ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածում:

▼B

2. Այս ընդհանուր սկզբունքներից շեղում թույլատրվում է բացառիկ դեպքերում: Ցանկացած նման շեղում պետք է բացահայտվի հաշվետվություններին կից ծանոթագրություններում՝ դրանց հիմնավորումների, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի վրա դրանց ազդեցության գնահատման հետ մեկտեղ:

Հոդված 32

Տարեկան ֆինանսական հաշվետվություններում ներկայացված հոդվածները գնահատվում են 34-42-րդ հոդվածների համաձայն, որոնք հիմնված են ձեռքբերման գնի կամ ինքնարժեքի սկզբունքի վրա:

Հոդված 33

1. Անդամ պետությունները կարող են հայտարարել Հանձնաժողովին, որ, շեղում կատարելով 32-րդ հոդվածից և մինչև հետագա համաձայնեցման գործընթացի ավարտը, իրենց իրավունք են վերապահում բոլոր ընկերություններին կամ ցանկացած դասի ընկերության թույլատրելի կամ դրանցից պահանջել հետևյալը՝

ա) տնտեսական արդյունավետ շահագործման՝ սահմանափակ օգտակարությամբ ժամկետով նյութական հիմնական միջոցների, ինչպես նաև պաշարների գնահատում՝ փոխարինման արժեքի մեթոդով.

բ) գնահատում (ա) կետում նախատեսված մեթոդից բացի այլ մեթոդներով, որոնք մշակված են տարեկան ֆինանսական հաշվետվություններում ներկայացված հոդվածների՝ ներառյալ կապիտալի և պահուստների կապակցությամբ սղաճը հաշվի առնելու համար.

▼M10

գ) հիմնական միջոցների վերագնահատումը:

▼B

Եթե ազգային իրավունքը նախատեսում է (ա), (բ) և (գ)–ում նշված գնահատման մեթոդները, այն պետք է սահմանի դրանց բովանդակությունը, սահմանները և դրանց կիրառման կանոնները:

Նման ցանկացած մեթոդի կիրառումը, հաշվապահական հաշվեկշռի, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության տվյալ հոդվածները և նշված արժեքների հաշվարկման մեթոդը պետք է բացահայտվեն հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

2. ա) Եթե կիրառվում է 1-ին պարբերությունը, կիրառված մեթոդով գնահատման և 32-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն գնահատման գումարային տարբերությունը պետք է մուտքագրվի «Պարտավորություններ»–ում՝ վերագնահատման պահուստում: Հարկման նպատակով այս հոդվածի դիտարկումը պետք է պարզաբանվի կամ հաշվապահական հաշվեկշռում, կամ հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

1-ին պարբերության վերջին ենթապարբերության կիրառման նպատակով, եթե ֆինանսական տարվա ընթացքում պահուստի գումարը փոփոխվել է, ընկերությունները հաշվետվություններին կից ծանոթագրություններում, ի թիվս այլոց, աղյուսակ են հրապարակում, որը ցույց է տալիս.

– վերագնահատման պահուստի գումարը՝ ֆինանսական տարվա սկզբում,

– ֆինանսական տարվա ընթացքում վերագնահատման պահուստ փոխանցված վերագնահատման տարբերությունները,

– կապիտալացված կամ այլ կերպ, ֆինանսական տարվա ընթացքում վերագնահատման պահուստից փոխանցված գումարները՝ բացահայտելով ցանկացած նմանատիպ փոխանցման բնույթը,

– վերագնահատման պահուստի գումարը՝ ֆինանսական տարվա վերջում:

բ) Վերագնահատման պահուստը ցանկացած ժամանակ կարող է ամբողջությամբ կամ մասամբ կապիտալացվել:

գ) Վերագնահատման պահուստը պետք է նվազեցվի այնքանով, որքանով այնտեղ փոխանցված գումարներն այլևս անհրաժեշտ չեն՝ կիրառված գնահատման մեթոդն իրականացնելու և դրա նպատակին հասնելու համար:

Անդամ պետությունները կարող են սահմանել այնպիսի կանոններ, որոնք կարգավորում են վերագնահատման պահուստի կիրառումը՝ պայմանով, որ վերագնահատման պահուստից ֆինանսական արդյունքների հաշվին փոխանցումները հնարավոր լինի կատարել միայն այնքանով, որքանով փոխանցված գումարները ֆինանսական արդյունքների հաշվին մուտքագրվել են որպես գանձումներ կամ արտացոլում են արժեքի փաստացի իրացված ավելացումները: Այդ գումարները պետք է առանձին–առանձին բացահայտվեն ֆինանսական

արդյունքների մասին հաշվետվության մեջ: Վերագնահատման պահուստի ոչ մի մաս չի թույլատրվում ուղղակիորեն կամ անուղղակիորեն բաշխել, բացառությամբ, երբ այն փաստացի իրացված հասույթ է ներկայացնում:

դ) Բացառությամբ (բ) և (գ) կետերով նախատեսված դեպքերի՝ վերագնահատման պահուստը չի կարող նվազեցվել:

3. Արժեքի ճշգրտումները հաշվարկվում են յուրաքանչյուր տարի՝ տվյալ ֆինանսական տարվա համար ընդունված արժեքի հիման վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անդամ պետությունները, շեղում կատարելով 4-րդ և 22-րդ հոդվածներից, կարող են թույլատրել կամ պահանջել, որ միայն 32-րդ հոդվածում սահմանված ընդհանուր կանոնի կիրառման արդյունքում առաջ եկած արժեքի ճշգրտումները նշվեն 23-26-րդ հոդվածներում սահմանված կառուցվածքների համապատասխան հոդվածներում, և որ սույն հոդվածի համաձայն ընդունված գնահատման մեթոդի արդյունքում առաջացած տարբերությունն առանձին նշվի կառուցվածքներում: Ավելին, 34-42-րդ հոդվածները կիրառվում են համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*):

4. Եթե կիրառվում է 1-ին պարբերությունը, հետևյալը պետք է բացահայտվի կամ հաշվապահական հաշվեկշռում, կամ հաշվետվություններին կից ծանոթագրություններում՝ հաշվապահական հաշվեկշռի յուրաքանչյուր հոդվածի համար առանձին, 9-րդ և 10-րդ հոդվածներով սահմանված կառուցվածքներում նախատեսված կարգով՝ բացառությամբ պաշարների՝

ա) կամ 32-րդ հոդվածում սահմանված ընդհանուր կանոնի համաձայն կատարված գնահատման գումարը՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ և կուտակային արժեքի ճշգրտումների գումարը,

բ) սույն հոդվածի համաձայն և 32-րդ հոդվածի կիրառման արդյունքում կատարված գնահատումների գումարային տարբերությունը՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ և, անհրաժեշտության դեպքում, արժեքի լրացուցիչ ճշգրտումների կուտակային գումարը:

5. Չսահմանափակելով 52-րդ հոդվածի գործողությունը՝ Խորհուրդը, Հանձնաժողովի առաջարկի հիման վրա և սույն Հրահանգի մասին ծանուցելուց հետո յոթ տարվա ընթացքում, ուսումնասիրում և, անհրաժեշտության դեպքում, փոփոխում է սույն հոդվածը՝ Համայնքում տնտեսական և դրամավարկային միտումներին համահունչ:

Հոդված 34

1. ա) Եթե ազգային իրավունքը թույլ է տալիս ներառել հիմնադրման ծախսերը «Ակտիվներ»-ում, դրանք պետք է դուրս գրվեն առավելագույնը հինգ տարվա ընթացքում:

բ) Քանի դեռ հիմնադրման ծախսերն ամբողջովին դուրս չեն գրվել, շահույթի բաշխում տեղի չի ունենում՝ բացառությամբ, երբ բաշխման համար առկա պահուստների և նախորդ հաշվապահական հաշվեկշռից փոխանցված շահույթների հանրագումարն առնվազն հավասար է դուրս չգրված ծախսերի գումարին:

2. «Հիմնադրման ծախսեր»-ի տակ մուտքագրված գումարները պետք է մեկնաբանվեն հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

Հոդված 35

1. ա) Հիմնական միջոցները պետք է գնահատվեն ձեռքբերման գնով կամ ինքնարժեքով՝ չսահմանափակելով ստորև ներկայացված (բ) և (գ) կետերի գործողությունը:

բ) Հիմնական միջոցների ձեռքբերման գինը կամ ինքնարժեքը, որը սահմանափակ օգտակարությամբ տնտեսական արդյունավետ շահագործման ժամկետ ունի, պետք է նվազեցվի արժեքի ճշգրտումներով, որոնք հաշվարկված են՝ դրանց օգտակար տնտեսական շահագործման ժամկետի ընթացքում նման ակտիվների արժեքը պարբերաբար դուրս գրելու համար:

գ) (աա) Արժեքի ճշգրտումներ կարող են կատարվել ֆինանսական հիմնական միջոցների նկատմամբ, այնպես որ դրանք գնահատվեն հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ դրանց վերագրվող գումարի ավելի ցածր արժեքով:

բբ) Արժեքի ճշգրտումներ պետք է կատարվեն հիմնական միջոցների նկատմամբ՝ անկախ այն բանից, թե դրանց օգտակար տնտեսական շահագործման ժամկետը սահմանափակ է թե ոչ, այնպես, որ դրանք գնահատվեն հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ դրանց վերագրվող գումարի ավելի ցածր արժեքով, եթե ակնկալվում է, որ դրանց արժեքի նվազեցումը մշտական բնույթ է կրելու:

գգ) (աա) և (բբ) կետերում նշված արժեքի ճշգրտումները պետք է փոխանցվեն ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն և առանձին բացահայտվեն հաշվետվություններին կից ծանոթագրություններում, եթե դրանք առանձին չեն նշվել ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ:

դդ) (աա) և (բբ) կետերում նախատեսված արժեքներից ավելի ցածր արժեքով գնահատումը չի կարող շարունակվել, եթե արժեքի ճշգրտումների հիմնավորումներն այլևս կիրառելի չեն:

դ) Եթե հիմնական միջոցները զուտ հարկային նպատակներով ենթակա են արժեքի բացառիկ ճշգրտումների, ճշգրտումների գումարը և դրանք կատարելու հիմնավորումները պետք է նշվեն հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

2. Ձեռքբերման գինը հաշվարկվում է՝ վճարված գնին ավելացնելով չնախատեսված ծախսերը:

3. ա) Ինքնարժեքը հաշվարկվում է՝ հումքի և սպառվող նյութերի ձեռքբերման գնին ավելացնելով տվյալ ապրանքին անմիջականորեն վերաբերող ծախսերը:

բ) Տվյալ ապրանքին միայն անուղղակիորեն վերաբերող ծախսերի որոշակի ընդունելի մասնաբաժին կարող է ավելացվել արտադրության ծախսերին այնքանով, որքանով դրանք առնչվում են արտադրության ժամանակահատվածին:

4. Հիմնական միջոցների արտադրությունը ֆինանսավորելու համար փոխառված կապիտալի տոկոսը կարող է ներառվել արտադրության ծախսերի մեջ այնքանով, որքանով այն առնչվում է արտադրության ժամանակահատվածին: Այդ դեպքում, նման տոկոսի ներառումը «Ակտիվներ»-ում պետք է բացահայտվի հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

Հոդված 36

Շեղում կատարելով 35(1)(գ)(գգ) հոդվածից՝ անդամ պետությունները կարող են 5(2) հոդվածի իմաստով ներդրումային ընկերություններին թույլատրել ներդրումների արժեքի ճշգրտումներն ուղղակիորեն հաշվանցել «Կապիտալ և պահուստներ»-ի հաշվին: Այդ

գումարները պետք է առանձին ցույց տրվեն հաշվապահական հաշվեկշռում՝ «Պարտավորություններ»-ում:

Հոդված 37

1. 34-րդ հոդվածը կիրառվում է գիտահետազոտական և նախագծային աշխատանքների հետ կապված ծախսերի նկատմամբ: Այնուամենայնիվ, բացառիկ դեպքերում, անդամ պետությունները կարող են շեղում թույլատրել 34(1)(ա) հոդվածից: Այդ դեպքում, նրանք կարող են շեղում թույլատրել նաև 34(1)(բ) հոդվածից: Նման շեղումները և դրանց հիմնավորումները պետք է բացահայտվեն հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

2. 34(1)(ա) հոդվածը կիրառվում է գուդվիլի նկատմամբ: Այնուամենայնիվ, անդամ պետությունները կարող են թույլատրել ընկերություններին պարբերաբար դուրս գրել գուդվիլի արժեքը հինգ տարին գերազանցող սահմանափակ ժամանակահատվածում՝ պայմանով, որ այդ ժամկետը չգերազանցի ակտիվի տնտեսական արդյունավետ շահագործման ժամկետը և բացահայտվի հաշվետվություններին կից ծանոթագրություններում՝ կից ներկայացված հիմնավորումների հետ միասին:

Հոդված 38

Այն նյութական հիմնական միջոցները, հումքը և սպառվող նյութերը, որոնք մշտապես փոխարինվում են և որոնց ընդհանուր արժեքը երկրորդային նշանակություն ունի կազմակերպության համար, կարող են ցույց տրվել «Ակտիվներ»-ի տակ ամրագրված քանակով և արժեքով, եթե դրանց քանակը, արժեքը և կառուցվածքն էապես չեն փոփոխվում:

Հոդված 39

1.ա) Ընթացիկ ակտիվները պետք է գնահատվեն ձեռքբերման գնով կամ ինքնարժեքով՝ չսահմանափակելով ստորև ներկայացված (բ) և (գ) կետերի գործողությունը:

բ) Արժեքի ճշգրտումներ կատարվում են ընթացիկ ակտիվների նկատմամբ՝ դրանք ավելի ցածր շուկայական արժեքով ցույց տալու նպատակով կամ, առանձնահատուկ հանգամանքներում, մեկ այլ ավելի ցածր արժեքով, որը դրանց վերագրվում է հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

գ) Անհրաժեշտության դեպքում, անդամ պետությունները կարող են թույլատրել արժեքի բացառիկ ճշգրտումներ՝ ողջամիտ առևտրային գնահատման հիման վրա, եթե այդ հոդվածների գնահատումը մոտ ապագայում չի փոփոխվելու արժեքի տատանման պատճառով: Արժեքի այդ ճշգրտումների գումարը պետք է առանձին բացահայտվի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

դ) (բ) և (գ) կետերում նախատեսված ավելի ցածր արժեքով գնահատումը չի կարող շարունակվել, եթե արժեքի ճշգրտումների հիմնավորումներն այլևս կիրառելի չեն:

ե) Եթե ընթացիկ ակտիվները ենթակա են արժեքի բացառիկ գնահատումների զուտ հարկային նպատակներով, ճշգրտումների գումարը և դրանք կատարելու հիմնավորումները պետք է բացահայտվեն հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

2. Կիրառվում են 35(2) և (3) հոդվածում նշված՝ ձեռքբերման գնի և ինքնարժեքի սահմանումները: Անդամ պետությունները կարող են նաև կիրառել 35(4) հոդվածը: Բաշխման ծախսերը չեն կարող ներառվել ինքնարժեքի մեջ:

Հոդված 40

Անդամ պետությունները կարող են թույլատրել, որ միննույն կարգի ապրանքների պաշարների, ինչպես նաև բոլոր փոխարինվող ապրանքների՝ ներառյալ՝ ներդրումների ձեռքբերման գինը և ինքնարժեքը հաշվարկվեն միջին կշռված գներով կամ ՖԻՖՕ մեթոդով (առաջին ձեռքբերման արժեք), ԼԻՖՕ մեթոդով (վերջին ձեռքբերման արժեք) կամ նմանատիպ այլ մեթոդով:

2. Եթե 1-ին պարբերության մեջ նշված հաշվարկման մեթոդների կիրառումից հետո հաշվապահական հաշվեկշռում նշված արժեքը հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ էապես տարբերվում է՝ նախքան հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտնի վերջին շուկայական արժեքի հիման վրա հաշվարկված արժեքից, տարբերությունն ըստ կարգի պետք է հանրագումարով բացահայտվի հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

Հոդված 41

1. Եթե որևէ պարտքի գծով վճարվող գումարն ավելի մեծ է, քան ստացված գումարը, տարբերությունը կարող է նշվել որպես ակտիվ: Այն պետք է առանձին նշվի հաշվապահական հաշվեկշռում կամ հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

2. Այդ տարբերությունը պետք է ողջամիտ գումարի չափով ամեն տարի դուրս գրվի և պետք է ամբողջովին դուրս գրվի ոչ ուշ, քան մինչև պարտքի մարման ժամկետը:

Հոդված 42

▼ M10

Պահուստները չեն կարող գերազանցել այն գումարները, որոնք անհրաժեշտ են:

▼ B

Հաշվապահական հաշվեկշռի «Այլ պահուստներ»-ում նշված պահուստները պետք է բացահայտվեն հաշվետվություններին կից ծանոթագրություններում, եթե դրանք էական են:

▼ M8

ԲԱԺԻՆ 7ա

Արդար արժեքով գնահատումը

Հոդված 42ա

1. Շեղում կատարելով 32-րդ հոդվածից և հիմք ընդունելով սույն հոդվածի 2–4-րդ պարբերությունների մեջ նշված պահանջները՝ անդամ պետությունները պետք է թույլ տան կամ պահանջեն, որ բոլոր ընկերությունները կամ ցանկացած դասի ընկերություն իրականացնի ֆինանսական գործիքների՝ ներառյալ ածանցյալ գործիքների արդար արժեքով գնահատում:

Նման թույլտվությունը կամ պահանջը կարող է կիրառվել միայն թիվ 83/349/ԵՏՀ հրահանգում սահմանված համախմբված հաշիվների նկատմամբ:

2. Սույն Հրահանգի նպատակով, ապրանքների մատակարարման պայմանագրերը, որոնք երկու կողմին էլ իրավունք են տալիս կանխիկով կամ այլ ֆինանսական գործիքով գործարքներ իրականացնել, համարվում են ածանցյալ ֆինանսական գործիքներ, բացառությամբ եթե՝

ա) դրանք կնքվել են և շարունակում են բավարարել ընկերության կողմից ակնկալվող առքի, վաճառքի կամ օգտագործման պայմանները,

բ) դրանք ի սկզբանե նախատեսված էին այդ նպատակի համար և

գ) դրանք պետք է կատարվեն ապրանքների մատակարարմամբ:

3. 1-ին պարբերությունը պետք է կիրառվի միայն այն պարտավորությունների նկատմամբ, որոնք

ա) առևտրային պորտֆելի մաս են կամ

բ) ածանցյալ ֆինանսական գործիքներ են:

4. 1-ին պարբերության համաձայն իրականացվող գնահատումը չի կիրառվում՝

ա) մինչև մարման ժամկետը պահվող ոչ ֆինանսական ածանցյալ գործիքների նկատմամբ,

բ) ընկերության փոխառությունների և դեբիտորական պարտքերի նկատմամբ, որոնք չեն պահվում շրջանառության նպատակներով,

գ) դուստր ընկերություններում, ասոցիացված ընկերություններում և համատեղ ձեռնարկություններում մասնաբաժինների, ընկերության կողմից թողարկված ֆոնդային գործիքների, ընկերությունների միավորումներում պայմանական վճարումների պայմանագրերի նկատմամբ, ինչպես նաև այնպիսի առանձնահատկություններով այլ ֆինանսական գործիքների նկատմամբ, համաձայն որոնց, նման գործիքները պետք է տարբերվեն մյուս ֆինանսական գործիքներից:

5. Շեղում կատարելով 32-րդ հոդվածից՝ անդամ պետությունները կարող են այդ ակտիվների և պարտավորությունների կամ նման ակտիվների կամ պարտավորությունների սահմանված չափաբաժինների կապակցությամբ, որոնք արդար արժեքով հեջավորման հաշվապահական համակարգում համարվում են հեջավորված, գնահատում թույլատրել՝ այդ համակարգի համաձայն պահանջվող հատուկ սահմանված գումարով:

▼ M12

5ա. Շեղում կատարելով 3-րդ և 4-րդ պարբերության դրույթներից՝ անդամ պետությունները, Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1606/2002 կանոնակարգի համաձայն «Որոշակի միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներ ընդունելու մասին» Հանձնաժողովի 2003 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1725/2003 կանոնակարգով ընդունված միջազգային հաշվապահական ստանդարտների համաձայն, կարող են թույլատրել կամ պահանջել ֆինանսական գործիքների գնահատում՝ բացահայտման հետ կապված պահանջների հետ միասին, որոնք նախատեսված են «Միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտների կիրառման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի հուլիսի 19-ի թիվ 1606/2002 կանոնակարգի համաձայն ընդունված հաշվապահական հաշվառման ստանդարտների համար:

Հոդված 42բ

1. 42ա հոդվածում նշված արդար արժեքը սահմանվում է հետևյալի հիման վրա՝

ա) շուկայական արժեք՝ այն ֆինանսական գործիքների գծով, որոնց համար անմիջապես կարելի է հուսալի շուկա նախանշել: Եթե հնարավոր չէ անմիջապես սահմանել գործիքի շուկայական արժեքը, սակայն այն կարող է սահմանվել իր բաղկացուցիչ մասերով կամ նմանատիպ գործիքներով, ապա շուկայական արժեքը կարելի է ստանալ իր բաղկացուցիչ մասերի կամ նմանատիպ գործիքի արժեքից, կամ

բ) համընդհանուր ընդունված գնահատման մոդելներից և տեխնիկայից բխող արժեք՝ այն գործիքների գծով, որոնց համար հնարավոր չէ անմիջապես հուսալի շուկա նախանշել: Նման գնահատման մոդելներն ու տեխնիկան ապահովում են շուկայական արժեքի ողջամիտ համապատասխանեցում:

2. Այն ֆինանսական գործիքները, որոնք հնարավոր չէ ճշգրիտ չափել 1-ին պարբերության մեջ նկարագրված մեթոդներից որևէ մեկով, պետք է չափվեն 34-42-րդ հոդվածների համաձայն:

Հոդված 42գ

1. Չնայած 31(1)(գ) հոդվածի, որտեղ ֆինանսական գործիքը գնահատվում է 42բ հոդվածի համաձայն, արժեքի փոփոխությունը ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ: Այնուամենայնիվ, նման փոփոխությունն անմիջականորեն ներառվում է սեփական կապիտալի արդար արժեքի գծով պահուստում, եթե՝

ա) հաշվի առնված գործիքը համարվում է հեջավորման հաշվապահական համակարգում որպես հեջավորման գործիք, որը հնարավոր է դարձնում որոշ չափով կամ ամբողջությամբ չարտահայտել արժեքի փոփոխությունը ֆինանսական արդյունքների հաշվետվությունում, կամ

բ) արժեքի փոփոխությունը կապված է օտարերկյա կազմակերպությունում ընկերության կողմից կատարված զուտ ներդրումների մաս կազմող դրամական միջոցներից բխող փոխարժեքի տարբերության հետ:

2. Անդամ պետությունները կարող են թույլ տալ կամ պահանջել, որպեսզի ֆինանսական ածանցյալ գործիքից բացի վաճառքի համար նախատեսված այլ ֆինանսական ակտիվի արժեքի փոփոխությունն անմիջականորեն ներառվի սեփական կապիտալի արդար արժեքի գծով պահուստում:

3. Արդար արժեքի գծով պահուստը վերագնահատվում է, երբ այնտեղ արտացոլված գումարներն այլևս անհրաժեշտ չեն՝ 1-ին և 2-րդ պարբերությունները կիրարկելու համար:

Հոդված 42դ

Եթե կիրառվել է ֆինանսական գործիքների գնահատում՝ արդար արժեքով, ապա հաշվետվություններին կից ծանոթագրությունների մեջ պետք է բացահայտվեն՝

ա) գնահատման մոդելների և տեխնիկայի հիմքում ընկած հիմնական ենթադրությունները, եթե արդար արժեքները սահմանվել են 42b(1)(բ) հոդվածի համաձայն:

բ) ըստ ֆինանսական գործիքների խմբի, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ անմիջականորեն ներառված արդար արժեքը, արժեքի փոփոխությունները, ինչպես նաև արդար արժեքի գծով պահուստում ներառված փոփոխությունները,

գ) ֆինանսական ածանցյալ գործիքների յուրաքանչյուր դասի համար, գործիքների չափի և բնույթի մասին տեղեկությունները՝ ներառյալ հիմնական պայմաններն ու ժամկետները, որոնք կարող են ազդել հետագա դրամական հոսքերի գումարի, ժամանակի և որոշակիության վրա, ինչպես նաև

դ) ֆինանսական տարվա ընթացքում արդար արժեքի գծով պահուստում շարժերն արտացոլող աղյուսակը:

▼M10

Հոդված 42ե

Շեղում կատարելով 32-րդ հոդվածից՝ անդամ պետությունները կարող են թույլատրել կամ պահանջել, որ բոլոր ընկերությունները կամ ցանկացած դասի ընկերություն իրականացնի ֆինանսական գործիքներից բացի այլ ակտիվների հատուկ խմբերի գնահատում՝ արդար արժեքի հիման վրա սահմանված գումարով:

Նման թույլտվությունը կամ պահանջը կարող է կիրառվել միայն թիվ 83/349/ԵՏՀ հրահանգում սահմանված համախմբված հաշիվների նկատմամբ:

Հոդված 42գ

1. Չնայած 31(1)(գ) հոդվածի՝ անդամ պետությունները կարող են թույլ տալ կամ պահանջել, որ բոլոր ընկերությունները կամ ցանկացած դասի ընկերություն, որտեղ ֆինանսական գործիքը գնահատվում է 42բ հոդվածի համաձայն, արժեքի փոփոխությունը ներառի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ:

▼B8

ԲԱԺԻՆ 8

Հաշվետվություններին կից ծանոթագրությունների բովանդակությունը

Հոդված 43

1. Սույն Հրահանգի այլ դրույթներով պահանջվող տեղեկատվությունից բացի՝ հաշվետվություններին կից ծանոթագրություններում պետք է տեղեկություններ տրամադրվեն առնվազն հետևյալ հարցերի վերաբերյալ՝

1) տարեկան ֆինանսական հաշվետվությունների տարբեր հոդվածների նկատմամբ կիրառված գնահատման մեթոդները և արժեքի ճշգրտումների հաշվարկման համար օգտագործված մեթոդները: Տարեկան ֆինանսական հաշվետվություններում ներառված հոդվածները, որոնք արտահայտված են կամ սկզբնապես արտահայտված էին արտարժույթով, ազգային արժույթով արտահայտելու համար օգտագործված փոխարկման հիմքը պետք է բացահայտվի:

2) յուրաքանչյուր կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը, որում ընկերությանը անմիջականորեն կամ իր անունից, բայց ընկերության կողմից գործող անձի միջոցով պատկանում է կապիտալում առնվազն որոշ չափաբաժին, որն անդամ պետությունը չի կարող սահմանել 20 տոկոսից բարձր՝ նշելով կապիտալի՝ ընկերությանը պատկանող

չափաբաժինը, կապիտալի և պահուստների գումարը, ինչպես նաև տվյալ կազմակերպության վերջին ֆինանսական տարվա շահույթը կամ վնասը, որոնց վերաբերյալ հաշվետվություններ են հաստատվել: Այդ տեղեկատվությունը կարելի է չնշել, եթե 2(3) հոդվածի նպատակներով այն աննշան կարևորություն է ներկայացնում: Կապիտալի ու պահուստների և շահույթի կամ վնասի մասին տեղեկությունները ևս կարելի է չնշել, եթե տվյալ կազմակերպությունը չի հրապարակում իր հաշվապահական հաշվեկշիռը, և եթե իր կապիտալի 50 տոկոսից պակաս չափաբաժինը (ուղղակիորեն կամ անուղղակիորեն) պատկանում է ընկերությանը. այն կազմակերպության անվանումը, գլխամասը, գործունեության վայրը և կազմակերպախրավական ձևը, որտեղ ընկերությունը կամ կազմակերպությունն անսահմանափակ պատասխանատվությամբ անդամ է: Այդ տեղեկատվությունը կարելի է չնշել, եթե 2(3) հոդվածի նպատակներով այն աննշան կարևորություն է ներկայացնում.

3) թույլատրված առավելագույն կապիտալի սահմաններում ֆինանսական տարվա ընթացքում տեղաբաշխված բաժնետոմսերի թիվը և անվանական արժեքը, իսկ անվանական արժեքի բացակայության դեպքում՝ հաշվապահական հաշվեկշռում արտացոլված անվանական արժեքը՝ այդ կապիտալի գումարի առումով՝ չսահմանափակելով թիվ 68/151/ԵՏՀ հրահանգի 2(1)(ե) հոդվածի կամ թիվ 77/91/ԵՏՀ հրահանգի 2(գ) հոդվածի գործողությունը.

4) եթե գոյություն ունեն բաժնետոմսերի մեկից ավելի դասեր, յուրաքանչյուր դասի բաժնետոմսերի թիվը և անվանական արժեքը, իսկ անվանական արժեքի բացակայության դեպքում՝ հաշվապահական հաշվեկշռում արտացոլված անվանական արժեքը.

5) մասնակցության որևէ վկայագրի, փոխարկելի չապահովված պարտատոմսերի կամ նմանատիպ արժեթղթերի կամ իրավունքների առկայությունը՝ նշելով դրանց թվի և դրանցով վերապահվող իրավունքների մասին.

6) ընկերության պարտքերի գումարները, որոնց մարման ժամկետն ավելի քան հինգ տարի է, ինչպես նաև ընկերության ընդհանուր պարտքերը՝ ապահովված ընկերության տրամադրած արժեքավոր արժեթղթով՝ նշելով արժեթղթի բնույթը և ձևը: Այս տեղեկությունները պետք է առանձին բացահայտվեն կրեդիտորական պարտքի յուրաքանչյուր հոդվածի համար՝ ▼M10 9-րդ, 10-րդ և 10ա հոդվածներում սահմանված կառուցվածքներում.

7) ցանկացած ֆինանսական պարտավորությունների՝ հաշվապահական հաշվեկշռում չներառված ընդհանուր գումարն այնքանով, որքանով այդ տեղեկատվությունն օժանդակում է ֆինանսական վիճակի գնահատմանը: Կենսաթոշակներին և փոխկապակցված կազմակերպություններին վերաբերող ցանկացած պարտավորություն պետք է բացահայտվի առանձին-առանձին:

▼M12

7ա) ընկերության՝ հաշվապահական հաշվեկշռում չներառված պայմանավորվածությունների բնույթն ու բիզնես նպատակը և այդ պայմանավորվածությունների ֆինանսական ազդեցությունը ընկերության վրա՝ պայմանով, որ նման պայմանավորվածություններից բխող ռիսկերը կամ օգուտները նյութական բնույթ ունեն և այնքանով, որքանով այդ ռիսկերի կամ օգուտների բացահայտումն անհրաժեշտ է ընկերության ֆինանսական դիրքը գնահատելու համար:

Անդամ պետությունները կարող են թույլատրել 27-րդ հոդվածում սահմանված ընկերություններին՝ սահմանափակել սույն կետով բացահայտման ենթակա տեղեկությունները՝ այդ պայմանավորվածությունների բնույթը և բիզնես նպատակը բացահայտելու չափով.

7բ) ընկերության համապատասխան կողմերի հետ կնքած գործարքները՝ ներառյալ այդ գործարքների գումարը, համապատասխան կողմի հարաբերության բնույթը և այլ

տեղեկություններ՝ ընկերության ֆինանսական դիրքի մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ գործարքների վերաբերյալ, եթե այդ գործարքները կրում են նյութական բնույթ և սովորական շուկայական պայմաններում չեն կատարվել: Առանձին գործարքների վերաբերյալ տեղեկությունները կարող են հավաքվել ըստ իրենց բնույթի՝ բացառությամբ, եթե առանձին տեղեկություններն անհրաժեշտ են՝ հասկանալու համար համապատասխան կողմի գործարքների ազդեցությունն ընկերության ֆինանսական դիրքի վրա:

Անդամ պետությունները կարող են թույլատրել, որ 27-րդ հոդվածում նշված ընկերությունները բաց թողնեն սույն կետում սահմանված բացահայտումները, եթե այդ ընկերությունները չեն համարվում թիվ 77/91/ԵՏՀ հրահանգի 1(1) հոդվածում նշված ընկերության տեսակներ, որի դեպքում անդամ պետությունները կարող են սահմանափակել բացահայտումն առնվազն այն գործարքների մասով, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կնքվել են՝

i) ընկերության և իր խոշոր բաժնետերերի,

և

ii) ընկերության և վարչական, կառավարման ու վերահսկող մարմինների անդամների միջև:

Անդամ պետությունները կարող են ազատել խմբի երկու կամ ավելի անդամների միջև կնքված գործարքները՝ պայմանով, որ գործարքի կողմ հանդիսացող դուստր ընկերություններն ամբողջությամբ տնօրինվեն այդ անդամի կողմից:

«Համապատասխան կողմ» հասկացությունն ունի միևնույն նշանակությունը, ինչ թիվ 1606/2002 կանոնակարգի համաձայն ընդունված միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներում:

▼B

8) 28-րդ հոդվածի իմաստով գուտ շրջանառությունը, որը բաժանված է ըստ գործունեության կարգերի և աշխարհագրական շուկաների այնքանով, որքանով այդ կարգերն ու շուկաներն էապես տարբերվում են միմյանցից՝ հաշվի առնելով ընկերության հիմնական գործունեության շրջանակներում ապրանքների վաճառքի և ծառայությունների մատուցումը կազմակերպելու կարգը.

9) ֆինանսական տարվա ընթացքում աշխատողների միջին թիվը՝ բաժանված կարգերի, իսկ եթե դրանք առանձին բացահայտված չեն ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ, այդ ֆինանսական տարվա համար անձնակազմի հետ հաշվարկները՝ բաժանված կարգերի 23(6) հոդվածում նախատեսված կարգով.

10) հարկային արտոնությունների տրամադրման նպատակով ֆինանսական տարվա շահույթի կամ վնասի հաշվարկման վրա հոդվածների այն գնահատման ունեցած ազդեցության աստիճանը, որը, շեղում կատարելով լՄՑ 31-րդ և 34-42-րդ հոդվածներում ձևակերպված սկզբունքներից, իրականացվել է տվյալ կամ որևէ նախորդ ֆինանսական տարում. Եթե նման գնահատման ազդեցությունը հետագա հարկային վճարների վրա էական է, մանրամասները պետք է բացահայտվեն.

11) տվյալ ֆինանսական տարվա և նախորդ ֆինանսական տարիների համար գանձված հարկերի տարբերությունը և այդ տարիների համար վճարման ենթակա հարկի գումարը, եթե հետագա հարկման համար այդ տարբերությունն էական է : Այդ գումարը կարող է նաև բացահայտվել հաշվապահական հաշվեկշռում որպես կուտակային գումար՝ առանձին հոդվածում համապատասխան վերնագրով.

12) վարձատրության գումարը, որը տրվել է այդ ֆինանսական տարվա ընթացքում վարչական, կառավարման և վերահսկիչ մարմինների անդամներին իրենց

պարտականությունները կատարելու դիմաց և այդ մարմինների նախկին անդամների նկատմամբ տարիքային կենսաթոշակների գծով ցանկացած ծագած կամ ստանձնած պարտավորությունը՝ յուրաքանչյուր կարգի համար նշելով հանրագումարը.

13) կանխավճարների և վարկերի գումարը, որոնք տրամադրվել են վարչական, կառավարման և վերահսկիչ մարմինների անդամներին՝ նշելով տոկոսադրույքը, հիմնական պայմանները և մարված գումարները, ինչպես նաև նրանց անունից ստանձնած, ցանկացած երաշխիքով ապահովված պարտավորությունները՝ յուրաքանչյուր կարգի համար նշելով ընդհանուր գումարը.

▼M8

14. Եթե ֆինանսական գործիքների արդար արժեքով գնահատումը չի կիրառվել 7ա բաժնի համաձայն.

ա) ֆինանսական ածանցյալ գործիքների յուրաքանչյուր դասի համար,

i) գործիքների արդար արժեք, եթե այդ արժեքը կարող է սահմանվել 42բ(1) հոդվածում սահմանված մեթոդներից յուրաքանչյուրով,

ii) գործիքների ծավալի և բնույթի մասին տեղեկություններ և

բ) 42ա հոդվածով նախատեսված հիմնական ֆինանսական ակտիվների համար՝ իրականացված իրենց արդար արժեքը գերազանցող գումարով և առանց օգտվելու, 35(1)(գ)(աա) հոդվածի համաձայն, արժեքի վերագնահատում իրականացնելու այլընտրանքից.

i) առանձին ակտիվների հաշվեկշռային արժեքը կամ այդ առանձին ակտիվների համապատասխան խմբերը,

ii) հաշվեկշռային արժեքը չիջեցնելու հիմքերը՝ ներառյալ ապացույցների բնույթը, որոնք հիմք են այն փաստի համար, որ հաշվեկշռային արժեքը կվերականգնվի:

▼M11

15) տարեկան ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտի համար պարտադիր աուդիտ իրականացնող անձի կամ աուդիտորական ընկերության կողմից գանձված ամբողջ վճարը, այլ երաշխիքային ծառայությունների համար գանձված ամբողջ վճարը, հարկային խորհրդատվական ծառայությունների համար գանձված ամբողջ վճարը և այլ ոչ աուդիտորական ծառայությունների համար գանձված ամբողջ վճարը՝ առանձին–առանձին:

Անդամ պետությունները կարող են նախատեսել, որ այս պահանջը չկիրառվի այն դեպքերում, երբ ընկերությունը ներառված է 83/349/ԵՏՀ հրահանգի 1–ին հոդվածով պահանջվող համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ պայմանով որ այդ տեղեկությունն արտացոլվի համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

▼B

2. Քանի դեռ չի ավարտվել հետագա համաձայնեցման գործընթացը, անդամ պետությունները կարող են 1(2) պարբերությունը չկիրառել 5(3) հոդվածի իմաստով ֆինանսական հողինգային ընկերությունների նկատմամբ:

▼M4

3. Անդամ պետությունները կարող են չկիրառել 1–ին պարբերության 12–րդ կետում սահմանված տեղեկությունների տրամադրման պահանջը, եթե այդ տեղեկությունները թույլ են տալիս սահմանել տվյալ մարմնի յուրաքանչյուր անդամի դիրքը:

Հոդված 44

▼M11

1. Անդամ պետությունները կարող են թույլատրել 11-րդ հոդվածում նշված ընկերություններին կազմել իրենց հաշվետվություններին կից համառոտ ծանոթագրություններ՝ առանց ներառելու 43-րդ հոդվածի (1)(5)–(12)–րդ, (14)(ա) և (15) կետերով պահանջվող տեղեկատվությունը: Այնուամենայնիվ, ծանոթագրությունները պետք է բացահայտեն 43(1)(6) հոդվածում նշված տեղեկությունները՝ համապատասխան բոլոր հոդվածների համար հանրագումարով:

▼M4

2. Անդամ պետությունները կարող են նաև թույլատրել 1–ին պարբերությունում սահմանված ընկերություններին ազատվել իրենց հաշվետվություններին կից ծանոթագրություններում 15 (3) (ա) և (4) հոդվածում, 18–րդ, 21–րդ ու 29 (2) հոդվածներում, 30–րդ հոդվածի երկրորդ ենթապարբերությունում, 34 (2) հոդվածում, 40 (2) հոդվածում և 42–րդ հոդվածի երկրորդ ենթապարբերությունում սահմանված տեղեկությունները բացահայտելու պարտականությունից:

3. Կիրառվում է 12–րդ հոդվածը:

▼B

Հոդված 45

1. Անդամ պետությունները կարող են թույլատրել, որ 43(1)(2) հոդվածով սահմանված բացահայտվող տեղեկությունները՝

ա) ստանան տեղեկանքի ձև, որը մուտքագրվում է՝ համաձայն թիվ 68/151/ԵՏՀ հրահանգի 3(1) և (2) հոդվածի. այդ մասին տեղեկությունը պետք է բացահայտվի հաշվետվություններին կից ծանոթագրություններում.

բ) բաց թողնվեն, եթե դրանց բնույթն այնպիսին է, որ դրանք լրջորեն կվնասեն այն կազմակերպություններին, որոնց վերաբերում է 43(1)(20) հոդվածը: Անդամ պետությունները կարող են սահմանել, որ նման բացթողումներ կատարելու համար անհրաժեշտ է վարչական կամ դատական մարմնի նախնական թույլտվությունը: Ցանկացած նման բացթողում պետք է բացահայտվի հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

▼M10

2. 1(բ) պարբերությունը կիրառվում է նաև 43(1)(8) հոդվածում սահմանված տեղեկատվության նկատմամբ:

▼M14 Անդամ պետությունները կարող են թույլ տալ 27–րդ հոդվածում նշված ընկերություններին չբացահայտել 34(2) և 43(1)(8) հոդվածներով սահմանված տեղեկատվությունը: Անդամ պետությունները կարող են նաև թույլ տալ 27–րդ հոդվածում նշված ընկերություններին չբացահայտել 43(1)(15) հոդվածով սահմանված տեղեկատվությունը՝ պայմանով, որ այդ տեղեկատվությունը տրամադրվի տարեկան ֆինանսական հաշվետվությունների ու համախմբված ֆինանսական հաշվետվությունների պարտադիր աուդիտի մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի մայիսի 17–ի թիվ 2006/43/ԵՀ հրահանգի (8) 32–րդ հոդվածում նշված հասարակական վերահսկողության համակարգին՝ հասարակական վերահսկողության նման համակարգի կողմից պահանջվելու դեպքում:

▼B

ԲԱԺԻՆ 9

Տարեկան հաշվետվության բովանդակությունը

Հոդված 46

▼M10

1. ա) Տարեկան զեկույցը պետք է առնվազն ներառի ընկերության գործունեության զարգացման և կատարողականի, ֆինանսական վիճակի արդարացի պատկերը, ինչպես նաև հիմնական ռիսկերի և անորոշությունների նկարագրությունը:

Նկարագրությունը պետք է լինի ընկերության գործունեության զարգացման և կատարողականի, ինչպես նաև դիրքի հավասարակշռված ու համապարփակ վերլուծությունը՝ գործունեության չափի և բարդությանը համապատասխան:

բ) Ընկերության զարգացումը, կատարողականը կամ դիրքը հասկանալու համար, վերլուծությունը պետք է ներառի տվյալ գործունեության առնչությամբ ֆինանսական և, անհրաժեշտության դեպքում, ոչ ֆինանսական կատարողականի առանցքային ցուցանիշները՝ ներառյալ շրջակա միջավայրի և աշխատողների հետ կապված հարցերի վերաբերյալ տեղեկությունները:

գ) Վերլուծությունը ներկայացնելիս տարեկան զեկույցը պետք է, անհրաժեշտության դեպքում, ներառի տարեկան հաշվետվություններում ներկայացված գումարներին հղումները և լրացուցիչ ծանոթագրությունները:

▼B

2. Ջեկույցում պետք է նշվեն նաև՝

ա) ֆինանսական տարվա ավարտից ի վեր տեղի ունեցած կարևոր իրադարձությունները:

բ) ընկերության հետագա հավանական զարգացումը:

գ) գործունեությունը գիտական հետազոտությունների և մշակումների բնագավառում:

դ) թիվ 77/91/ԵՏՀ հրահանգի 22(2) հոդվածով սահմանված կարգով սեփական բաժնետոմսերի ձեռքբերմանը վերաբերող տեղեկություններ:

▼M3

ե) ընկերության մասնաճյուղերի առկայությունը:

▼M8

զ) ընկերության կողմից ֆինանսական գործիքների օգտագործման կապակցությամբ և անհրաժեշտության դեպքում իր ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական դիրքի և ֆինանսական արդյունքների գնահատման նպատակով՝

– ընկերության ֆինանսական ռիսկի կառավարման նպատակներն ու քաղաքականությունը՝ ներառյալ կանխատեսված գործարքի յուրաքանչյուր հիմնական տեսակի հեջավորման վերաբերյալ քաղաքականությունը, որի դեպքում գործածվել է հեջավորման հաշվապահական հաշվառումը և

– ընկերության գնային ռիսկը, վարկային ռիսկը, իրացվելիության ռիսկը և դրամական հոսքի ռիսկը:

▼M4

3. Անդամ պետությունները կարող են ազատել 11-րդ հոդվածով նախատեսված ընկերություններին տարեկան զեկույցներ պատրաստելու պարտականությունից՝ պայմանով, որ «Ընկերության կողմից իր սեփական բաժնետոմսերի ձեռքբերման վերաբերյալ» թիվ

77/91/ԵՏՀ հրահանգի 22 (2) հոդվածում սահմանված տեղեկությունները ներկայացվեն իրենց հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

▼M10

4. Անդամ պետությունները կարող են ազատել 27-րդ հոդվածում սահմանված ընկերություններին վերոհիշյալ 1(բ) պարբերությամբ նախատեսված պարտավորությունից, եթե դա վերաբերում է ոչ ֆինանսական տեղեկություններին:

▼M12

Հոդված 46ա

1. Այն ընկերությունները, որոնց արժեթղթերի շրջանառությունը թույլատրվում է Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի «Ֆինանսական գործիքների շուկաների մասին» թիվ 2004/39/ԵՀ հրահանգի [9] 4(1) հոդվածի 14-րդ կետում սահմանված կարգավորվող շուկայում, պետք է իրենց տարեկան զեկույցում կորպորատիվ կառավարման մասին հաշվետվություն ներառեն : Այդ հաշվետվությունը պետք է տարեկան զեկույցում որպես հատուկ բաժին ներառվի և պարունակի առնվազն հետևյալ տեղեկությունները.

ա) հղում՝

i) ընկերության նկատմամբ կիրառվող կորպորատիվ կառավարման կանոնագրքին,

և (կամ)

ii) կորպորատիվ կառավարման կանոնագրքին, որը ընկերությունը կարող է որոշել կամավոր կիրառել,

և(կամ)

iii) ազգային իրավունքի ներքո կիրառվող պահանջներից բացի այլ կորպորատիվ կառավարման գործելակերպերի վերաբերյալ բոլոր համապատասխան տեղեկություններին:

Եթե կիրառվում են (i) և (ii) կետերը, ապա ընկերությունը պետք է նշի, թե որտեղ է հնարավոր գտնել համապատասխան տեքստերը, իսկ եթե կիրառվում է (iii) կետը, ապա ընկերությունը պետք է հանրամատչելի դարձնի իր կորպորատիվ կառավարման գործելակերպը,

բ) այնքանով, որքանով ընկերությունը, ազգային իրավունքի համաձայն, շեղվել է (ա)(i) կամ (ii) կետերում նշված կորպորատիվ կառավարման կանոնագրքից, ընկերության կողմից բացատրություն առ այն, թե կորպորատիվ կառավարման կանոնագրքի որ մասերից է շեղում կատարվել և դրա պատճառները: Եթե ընկերությունը որոշել է չկիրառել (ա)(i) կամ (ii) կետերում նշված կորպորատիվ կառավարման կանոնագրքի որևէ դրույթ, ապա պետք է բացատրի դրա պատճառները.

գ) ընկերության ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի հիմնական առանձնահատկությունների նկարագրությունը ֆինանսական հաշվետվությունները ներկայացնելու գործընթացի կապակցությամբ.

դ) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի թիվ 2004/25/ԵՀ հրահանգի 10(1) հոդվածի, (գ), (դ), (զ), (ը) և (թ) կետերով պահանջվող տեղեկությունները (10), որտեղ ընկերության նկատմամբ կիրառվում է այդ հրահանգը

ե) եթե տեղեկություններն արդեն իսկ ամբողջությամբ նախատեսված չեն ազգային իրավունքով կամ կանոնակարգերով, ապա բաժնետերերի ժողովի արդյունքը և հիմնական

լիազորությունները, ինչպես նաև բաժնետերերի իրավունքներն ու դրանց իրականացման ձևերը.

զ) ընկերության և վարչական, կառավարման ու վերահսկող մարմինների և դրանց կոմիտեաների կազմն ու գործունեությունը:

2. Անդամ պետությունները կարող են թույլատրել, որ սույն հոդվածով պահանջվող տեղեկությունները ներկայացվեն առանձին զեկույցում, որը կհրապարակվի տարեկան զեկույցի հետ մեկտեղ՝ 47-րդ հոդվածում սահմանված կարգով կամ տարեկան զեկույցում հղում կատարելու միջոցով, եթե նման փաստաթուղթը հանրամատչելի է ընկերության կայքէջում: Առանձին զեկույցի դեպքում, կորպորատիվ կառավարման հաշվետվությունը կարող է հղում պարունակել տարեկան զեկույցին, եթե 1-ին պարբերության (դ) կետով պահանջվող տեղեկությունները մատչելի դարձվեն: 51(1) հոդվածի երկրորդ ենթապարբերությունը կիրառվում է սույն հոդվածի 1-ին պարբերության (զ) և (դ) կետերի դրույթների նկատմամբ: Մնացած տեղեկությունների համար պարտադիր աուդիտ իրականացնող անձը ստուգում է, թե արդյոք պատրաստվել է կորպորատիվ կառավարման հաշվետվություն:

3. Անդամ պետությունները կարող են ազատել ընկերություններին, որոնք թողարկել են կարգավորվող շուկայում առևտրի համար թույլատրված արժեթղթերից բացի այլ արժեթղթեր, թիվ 2004/39/ԵՀ հրահանգի 4(1) հոդվածի (14) կետի իմաստով, 1-ին պարբերության (ա), (բ), (ե) և (զ) կետերի դրույթները կատարելու պարտականությունից, եթե այդ ընկերությունները չեն թողարկել այնպիսի բաժնետոմսեր, որոնք շրջանառվում են բազմակողմանի առևտրային կենտրոններում՝ թիվ 2004/39/ԵՀ հրահանգի 4(1) հոդվածի (15) կետի իմաստով:

▼B

ԲԱԺԻՆ 10

Հրապարակումը

Հոդված 47

1. Պատշաճորեն հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան զեկույցը, հաշվետվությունների աուդիտի համար պատասխանատու անձի ներկայացրած եզրակացության հետ միասին, հրապարակվում են թիվ 68/151/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածին համապատասխան յուրաքանչյուր անդամ պետության օրենքներով սահմանված կարգով:

Այնուամենայնիվ, անդամ պետության օրենքները կարող են թույլատրել, որ տարեկան զեկույցը չհրապարակվի վերը սահմանված կարգով: ▼M1 Նման հաշվետվության օրինակի՝ ամբողջությամբ կամ դրա մի մասի ձեռքբերման հնարավորություն պետք է ընձեռնվի նման պահանջի առկայության դեպքում: Այդ օրինակի գինը չպետք է գերազանցի դրա վարչական ծախսը:

▼M5

1ա. 1 (1) հոդվածի երկրորդ և երրորդ ենթապարբերություններում սահմանված ընկերության կամ կազմակերպության (շահագրգիռ կազմակերպություն) անդամ պետությունը կարող է ազատել այդ կազմակերպությանը իր հաշվետվությունները թիվ 68/151/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածի համաձայն հրապարակելու պարտականությունից՝ պայմանով, որ այդ հաշվետվությունները հանրամատչելի կլինեն իրենց գլխամասային գրասենյակում, եթե՝

ա) շահագրգիռ կազմակերպության անսահմանափակ պատասխանատվությամբ բոլոր անդամները 1(1) հոդվածի առաջին ենթապարբերությունում նշված ընկերություններ են և կարգավորվում են այդ կազմակերպության գործունեությունը կարգավորող անդամ պետության իրավունքից բացի այլ անդամ պետությունների իրավունքներով, և այդ ընկերություններից ոչ մեկը շահագրգիռ կազմակերպության հաշվետվությունները չի հրապարակում իր հաշվետվության հետ միասին, կամ

բ) բոլոր անդամները, որոնք անսահմանափակ պատասխանատվություն ունեն, համարվում են այնպիսի ընկերություններ, որոնց վրա չի տարածվում անդամ պետությունների իրավունքները, սակայն թիվ 68/151/ԵՏՀ հրահանգում սահմանված ընկերություններին համադրելի կազմակերպարավական ձև ունեն :

Հաշվետվությունների օրինակները պետք է ձեռք բերել ըստ պահանջի: Նման օրինակի գինը չի կարող գերազանցել դրա վարչական ծախսը: Համապատասխան պատժամիջոցներ պետք է սահմանվեն սույն պարբերությունում սահմանված հրապարակման պարտավորությունները չկատարելու համար:

▼B

2. 1-ին պարբերությունից շեղում կատարելով՝ անդամ պետությունները կարող են 11-րդ հոդվածում նշված ընկերություններին թույլատրել հրապարակել՝

ա) համառոտ հաշվապահական հաշվեկշիռ, որը ցույց է տալիս 9-րդ և 10-րդ հոդվածներով սահմանված միայն այն հոդվածները, որոնց նախորդում են տառեր և հռոմեական թվեր՝ առանձին–առանձին բացահայտելով 9-րդ հոդվածով սահմանված «Ակտիվներ»–ի Դ(11)–ում և «Պարտավորություններ»–ի Գ–ում, 10-րդ հոդվածով սահմանված Դ(11)–ում փակագծերում պահանջվող տեղեկությունները, սակայն համապատասխան բոլոր հոդվածների համար հանրագումարով, և

▼M4

բ) իրենց հաշվետվություններին կից համառոտ ծանոթագրություններ՝ 44-րդ հոդվածի համաձայն:

▼B

Կիրառվում է 12-րդ հոդվածը:

Բացի դրանից՝ անդամ պետությունները կարող են նման ընկերություններին ազատել իրենց ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններն ու տարեկան զեկույցները, ինչպես նաև հաշվետվությունների աուդիտի համար պատասխանատու անձանց եզրակացությունները հրապարակելու պարտավորությունից:

3. Անդամ պետությունները կարող են թույլատրել 27-րդ հոդվածում նշված ընկերություններին հրապարակել՝

ա) համառոտ հաշվապահական հաշվեկշիռներ, որոնք արտացոլում են 9-րդ և 10-րդ հոդվածներով սահմանված միայն այն հոդվածները, որոնց նախորդում են տառեր և հռոմեական թվեր՝ առանձին բացահայտելով կամ հաշվապահական հաշվեկշիռում կամ հաշվետվություններին կից ծանոթագրություններում.

- Գ(I)(3), Գ(II)(1), (2), (3) և (4), Գ (III)(1), (2), (3), (4) և (7), Դ(II)(2), (3) և (6), Դ(III)(1) ու (2)՝ «Ակտիվներ»–ում և Գ(1), (2), (6), (7) և (9)՝ «Պարտավորություններ»–ում՝ 9-րդ հոդվածում.

- Գ(I)(3), Գ(II)(1), (2), (3) և (4), Գ(III)(1), (2), (3), (4) ու (7), Դ(II)(2), (3) և (6), Դ(III)(1) և (2), Զ(1), (2), (6), (7) ու (9) և (Թ)(1), (2), (6), (7) ու (9)՝ 10-րդ հոդվածում.

– 9-րդ հոդվածով սահմանված՝ «Ակտիվներ»–ի ներքո Դ(II)–ում փակագծերում պահանջվող տեղեկատվությունը և «Պարտավորություններ»–ի ներքո՝ Գ–ում պահանջվող

տեղեկատվությունը՝ հանրագումարով համապատասխան բոլոր հոդվածների համար և առանձին Դ(II)(2) և (3)-ի համար՝ «Ակտիվներ»-ում և Գ(1), (2), (6), (7) և (9)-ի՝ «Պարտավորություններ»-ում.

– 10-րդ հոդվածով սահմանված՝ Դ(II)-ում փակագծերում պահանջվող տեղեկատվությունը՝ համապատասխան բոլոր հոդվածների համար հանրագումարով և առանձին-առանձին Դ(11)(2) ու (3)-ի համար.

բ) հաշվետվություններին կից համառոտ ծանոթագրություններ՝ առանց 43(1)(5), (6), (8), (10) և (11) հոդվածներով պահանջվող տեղեկատվության: Այնուամենայնիվ, հաշվետվություններին կից ծանոթագրությունները պետք է բացահայտեն 43(1)(6) հոդվածում նշված տեղեկությունները՝ համապատասխան բոլոր հոդվածների համար հանրագումարով:

Սույն պարբերությունը չի սահմանափակում 1-ին պարբերության գործողությունն այնքանով, որքանով այն վերաբերում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը, տարեկան զեկույցին և հաշվետվությունների աուդիտի համար պատասխանատու անձի եզրակացությանը:

Կիրառվում է 12-րդ հոդվածը:

Հոդված 48

Եթե տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան զեկույցը հրապարակվում են ամբողջությամբ, դրանք պետք է վերարտադրվեն այնպիսի ձևով և տեքստով, որի հիման վրա հաշվետվությունների աուդիտի համար պատասխանատու անձը կազմել է իր եզրակացությունը: Դրանց պետք է կցվի նրա զեկույցի ամբողջական տեքստը: ▼M10 _
— □

Հոդված 49

Եթե տարեկան ֆինանսական հաշվետվություններն ամբողջությամբ չեն հրապարակվում, պետք է նշել, որ հրապարակված տարբերակը համառոտ է և հղում կատարել այն գրանցամատյանին, որտեղ 47(1) հոդվածի համաձայն արխիվացվել են հաշվետվությունները: Եթե նման արխիվացում դեռևս չի կատարվել, այդ փաստը պետք է բացահայտվի: ▼M10 Տարեկան հաշվետվությունների աուդիտի համար պատասխանատու անձի կամ անձանց հաշվետվությունը (այսուհետ՝ պարտադիր աուդիտ իրականացնող անձ) չի կցվում այս հրատարակությանը, սակայն պետք է բացահայտվի, թե արդյոք չորակավորված, որակավորված կամ հակառակ աուդիտորական կարծիք արտահայտվել էր, կամ արդյոք պարտադիր աուդիտ իրականացնող անձինք կարող էին աուդիտորական եզրակացություն հայտնել:

Այն պետք է բացահայտի նաև, թե արդյոք պարտադիր աուդիտ իրականացնող անձանց հաշվետվությունը ներառում է հղում ցանկացած հարցին, որի վրա պարտադիր աուդիտ իրականացնող անձինք առանց աուդիտորական եզրակացության ուշադրություն են դարձրել:

Հոդված 50

Տարեկան ֆինանսական հաշվետվությունների հետ միասին և նմանատիպ կարգով պետք է հրապարակվի հետևյալը.

– շահույթի առաջարկվող բաշխումը կամ վնասի փոխհատուցումը,

– շահույթի Բաշխումը կամ վնասի փոխհատուցումը,

եթե այս հոդվածները բացակայում են տարեկան ֆինանսական հաշվետվություններում:

▼M4

Հոդված 50ա

Տարեկան հաշվետվությունները կարող են հրապարակվել այն արժույթով, որով դրանք պատրաստվել են, և ԵԱՄ–ով՝ արտահայտված հաշվեկշռի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Այդ փոխարժեքը նշվում է հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

▼M12

ԲԱԺԻՆ 10Ա

Տարեկան հաշվետվություններ ու տարեկան զեկույց կազմելու և հրապարակելու պարտականությունն ու պարտավորությունը

Հոդված 50բ

Անդամ պետություններն ապահովում են, որ ընկերության վարչական, կառավարման և վերահսկող մարմինների անդամները միասին պարտավորվեն ապահովել, որ 46ա հոդվածի համաձայն ներկայացվող տարեկան հաշվետվությունները, տարեկան զեկույցը և, առանձին ներկայացվելու դեպքում, կորպորատիվ կառավարման հաշվետվությունը պետք է կազմվի և հրապարակվի սույն Հրահանգի պահանջներին համապատասխան և, անհրաժեշտության դեպքում, թիվ 1606/2002 կանոնակարգի համաձայն ընդունված միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն: Այդ մարմինները պետք է գործեն ազգային իրավունքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում:

Հոդված 50գ

Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ պատասխանատվության վերաբերյալ իրենց օրենքները, կանոնակարգերը և վարչական դրույթները կիրառվեն 50բ հոդվածում նախատեսված վարչական, կառավարման և վերահսկող մարմինների անդամների նկատմամբ, առնվազն ընկերության նկատմամբ՝ 50բ հոդվածում սահմանված պարտականությունը խախտելու համար:

▼B

ԲԱԺԻՆ 11

Աուդիտորական գործունեությունը

Հոդված 51

▼M10

1. Ընկերությունների տարեկան հաշվետվությունները պետք է աուդիտի ենթարկվեն մեկ կամ ավելի անձանց կողմից, որոնք նշանակվել են անդամ պետությունների կողմից պարտադիր աուդիտ իրականացնելու համար Խորհրդի 1984 թվականի ապրիլի 10–ի «Հաշվապահական փաստաթղթերը պարտադիր աուդիտի ենթարկելու համար պատասխանատու անձանց հաստատման մասին» ութերորդ հրահանգի հիման վրա (11):

Պարտադիր աուդիտ իրականացնող անձինք նաև կարծիք են ներկայացնում միևնույն ֆինանսական տարվա կտրվածքով տարեկան զեկույցի և տարեկան հաշվետվությունների միջև համապատասխանության կամ հակառակի վերաբերյալ:

▼ B

2. Անդամ պետությունները կարող են 11-րդ հոդվածում նշված ընկերություններին ազատել 1-ին պարբերությամբ սահմանված պարտավորություններից:

Կիրառվում է 12-րդ հոդվածը:

3. Եթե տրամադրվում է 2-րդ պարբերությամբ նախատեսված արտոնությունը, անդամ պետությունները համապատասխան պատժամիջոցներ են սահմանում իրենց օրենքներում այն դեպքերի համար, երբ նման ընկերությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները կամ տարեկան զեկույցները կազմված չեն սույն Հրահանգի պահանջներին համապատասխան:

▼ M10

Հոդված 51ա

1. Պարտադիր աուդիտ իրականացնող անձանց հաշվետվությունը ներառում է.

ա) ներածություն, որի մեջ առնվազն պետք է նշվի պարտադիր աուդիտի ենթակա տարեկան հաշվետվությունները՝ ֆինանսական հաշվետվությունների շրջանակի հետ միասին, որը կիրառվել է դրանք մշակելու աշխատանքներում,

բ) պարտադիր աուդիտի շրջանակի նկարագրությունը, որի մեջ առնվազն նշվում է այն աուդիտորական ստանդարտները, որոնց համաձայն իրականացվել է պարտադիր աուդիտը,

գ) աուդիտորական եզրակացություն, որի մեջ հստակ նշվում է պարտադիր աուդիտ իրականացնող աուդիտորների եզրակացությունն այն մասին, թե արդյոք տարեկան հաշվետվությունները ներկայացնում են ճշգրիտ կամ արդարացի տեսակետ՝ համապատասխան ֆինանսական հաշվետվությունների շրջանակի համաձայն և, անհրաժեշտության դեպքում, այն մասին, թե արդյոք տարեկան հաշվետվությունները համապատասխանում են պարտադիր պահանջներին. աուդիտորական եզրակացությունը պետք է լինի կամ ոչ մասնագիտական, կամ մասնագիտական, կամ հակադարձ կարծիք, կամ կարծիք տալուց հրաժարվելու մասին հայտարարություն, եթե պարտադիր աուդիտ իրականացնող անձինք չեն կարող են աուդիտորական եզրակացություն տալ,

դ) հղում այն հարցերին, որոնց վրա պարտադիր աուդիտ իրականացնող անձինք ուշադրություն են դարձրել՝ առանց աուդիտորական եզրակացություն ներկայացնելու,

ե) միևնույն ֆինանսական տարվա կտրվածքով տարեկան զեկույցի և տարեկան հաշվետվությունների միջև համապատասխանության կամ ոչ համապատասխանության վերաբերյալ կարծիք:

2. Հաշվետվությունը ստորագրվում և թվագրվում է պարտադիր աուդիտ իրականացնող անձանց կողմից:

▼B

ԲԱԺԻՆ 12

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 52

1. Հանձնաժողովի հովանու ներքո ստեղծվում է Փոխադարձ կապն ապահովող կոմիտե: Այդ կոմիտեի գործառույթներն են.

ա) չսահմանափակելով Համաձայնագրի 169-րդ և 170-րդ հոդվածների դրույթների գործողությունը՝ նպաստել սույն Հրահանգի ներդաշնակ կիրառմանը կանոնավոր հանդիպումների միջոցով, որտեղ մասնավորապես շոշափվում են դրա կիրառման հետ կապված գործնական խնդիրները,

բ) անհրաժեշտության դեպքում սույն Հրահանգում լրացումներ կամ փոփոխություններ կատարելու վերաբերյալ խորհրդատվություն տրամադրել Հանձնաժողովին:

2. Փոխադարձ կապն ապահովող կոմիտեն կազմված է անդամ պետությունների ներկայացուցիչներից և Հանձնաժողովի ներկայացուցիչներից: Նախագահը պետք է լինի Հանձնաժողովի ներկայացուցիչը: Հանձնաժողովը քարտուղարություն է տրամադրում:

3. Կոմիտեի նիստերը հրավիրում է նախագահը՝ սեփական նախաձեռնությամբ կամ անդամներից որևէ մեկի պահանջով:

Հոդված 53

▼M10

▼B

2. Գործելով Հանձնաժողովից ստացված առաջարկի հիման վրա՝ Խորհուրդը յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ ուսումնասիրում, և անհրաժեշտության դեպքում, վերանայում է սույն Հրահանգում նշված եվրոպական հաշվարկային միավորով արտահայտված գումարը՝ հաշվի առնելով Համայնքում տնտեսական և դրամավարկային միտումները:

▼M12

Հոդված 53ա

Անդամ պետությունները չպետք է 11-րդ, 27-րդ հոդվածներով, 43(1) հոդվածի (7ա) և (7b) կետերով, 46-րդ, 47-րդ ու 51-րդ հոդվածներով սահմանված պարտականություններից ազատեն այն ընկերություններին, որոնց արժեթղթերի շրջանառությունը թույլատրվել է կարգավորվող շուկայում՝ թիվ 2004/39/ԵՀ հրահանգի 4(1) հոդվածի 14-րդ կետի իմաստով:

▼M3

▼B

Հոդված 55

1. Անդամ պետությունները սույն Հրահանգը կատարելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը գործողության մեջ են դնում Հրահանգի մասին ծանուցելուց հետո երկու տարվա ընթացքում: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Անդամ պետությունները կարող են սահմանել, որ 1-ին պարբերությունում նշված ակտերը չեն կիրառվում այդ պարբերության մեջ նախատեսված ժամկետի ավարտից հետո տասնութ ամսվա ընթացքում:

Այնուամենայնիվ, այդ տասնութամսյա ժամկետը կարող է լինել հինգ տարի.

ա) Միացյալ Թագավորությունում և Իռլանդիայում չգրանցված ընկերությունների դեպքում,

բ) հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության կառուցվածքներին վերաբերող 9-րդ և 10-րդ, ինչպես նաև 23-26-րդ հոդվածների կիրառման նպատակներով, եթե անդամ պետությունն այդ փաստաթղթերի համար գործողության մեջ է դրել այլ կառուցվածքներ սույն Հրահանգի ծանուցումից ոչ ավելի, քան երեք տարի առաջ,

գ) սույն Հրահանգի կիրառման նպատակներով՝ 9-րդ Գ(II)(2) և (3) հոդվածում, ինչպես նաև 10-րդ Գ(II)(2) և (3) հոդվածում նշված ակտիվների հոդվածներում ներառված ակտիվների գծով մաշվածության հաշվարկման ու հաշվապահական հաշվեկշռում բացահայտելու մասով,

դ) սույն Հրահանգի 47(1) հոդվածի կիրառման նպատակներով՝ բացառությամբ այն ընկերությունների, որոնք թիվ 68/151/ԵՏՀ հրահանգի 2(1)(գ) հոդվածի համաձայն, արդեն հրապարակման պարտավորություն են կրում: Այդ դեպքում, սույն Հրահանգի 47(1) հոդվածի երկրորդ ենթապարբերությունը կիրառվում է տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հաշվետվությունների աուդիտի համար պատասխանատու անձի կազմած եզրակացության նկատմամբ,

ե) սույն Հրահանգի 51(1) հոդվածի կիրառման նպատակներով:

Ավելին, տասնութամսյա այդ ժամկետը կարող է երկարաձգվել մինչև ութ տարի՝ այն ընկերությունների համար, որոնց հիմնական նպատակը բեռնափոխադրումն է և որոնք արդեն գոյություն ունեին 1-ին պարբերությունում նշված ակտերն ուժի մեջ մտնելու պահին:

3. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ Հանձնաժողով ներկայացվեն սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում իրենց կողմից ընդունվող ազգային իրավունքի հիմնական ակտերի տեքստերը:

▼M1

Հոդված 56

1. Տարեկան ֆինանսական հաշվետվության մեջ 9-րդ, 10-րդ, 10ա և 23-26-րդ հոդվածներում ▼M12 սահմանված, դուստր ձեռնարկություններին վերաբերող կետերը ներկայացնելու պարտավորությունը, թիվ 83/349/ԵՏՀ հրահանգի 41-րդ հոդվածում սահմանված կարգով, այդ ձեռնարկությունների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու պարտավորությունը՝ համաձայն 13 (2), 14-րդ հոդվածների և 43 (1) հոդվածի 7-րդ կետի, ուժի մեջ է մտնում սույն Հրահանգի 49 (2) հոդվածում սահմանված ամսաթվին:

2. Հաշվետվություններին կից ծանոթագրություններում նաև բացահայտվում են՝

ա) ձեռնարկությունների այն ամենամեծ խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններ կազմող ձեռնարկության անվանումն ու գրանցված գրասենյակը, որի կազմում ընդգրկված է ընկերությունը՝ որպես դուստր ձեռնարկություն,

բ) ձեռնարկությունների այն ամենափոքր խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններ կազմող ձեռնարկության անվանումն ու գրանցված գրասենյակը, որի կազմում ընդգրկված է ընկերությունը՝ որպես դուստր ձեռնարկություն, և որը նաև ընդգրկված է վերը նշված (ա)-ում նշված ձեռնարկությունների համախմբության մեջ,

զ) այն վայրը, որտեղ կարելի է ձեռք բերել վերը նշված (ա) և (բ) կետերում նախատեսված՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների օրինակները, եթե դրանք հասանելի են:

Հոդված 57

Չնայած թիվ 68/151/ԵՏՀ և 77/91/ԵՏՀ հրահանգների դրույթներին՝ անհրաժեշտություն չկա, որ անդամ պետությունը կիրառի սույն Հրահանգի՝ տարեկան ֆինանսական հաշվետվությունների բովանդակության, աուդիտի և հրատարակման վերաբերյալ դրույթները այն ընկերությունների նկատմամբ, որոնք կարգավորվում են իրենց ազգային իրավունքով, և որոնք թիվ 83/349/ԵՏՀ հրահանգով սահմանված կարգով դուստր ձեռնարկություն են, եթե բավարարվում են հետևյալ պայմանները.

ա) մայր ընկերությունը պետք է կարգավորվի անդամ պետության օրենքներով,

բ) դուստր ձեռնարկության բոլոր բաժնետերերը կամ անդամները պետք է հայտնած լինեն իրենց համաձայնությունը նման պարտավորությունից ազատվելու մասին, և այս համաձայնությունը պետք է հայտնվի յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար,

գ) մայր ընկերությունը պետք է հայտարարած լինի, որ այն երաշխավորում է դուստր ձեռնարկության կողմից ստանձնած պարտավորությունների իրականացումը,

դ) (բ) և (գ) կետերում նշված համաձայնության մասին հայտարարությունները պետք է հրատարակվեն դուստր ձեռնարկության կողմից՝ անդամ պետության օրենքներով սահմանված կարգով՝ համաձայն թիվ 68/151/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածի,

ե) դուստր ձեռնարկությունը պետք է ընդգրկվի մայր ընկերության կողմից թիվ 83/349/ԵՏՀ հրահանգի համաձայն կազմված համախմբված ֆինանսական հաշվետվություններում,

զ) վերը նշված պարտավորություններից ազատումը պետք է բացահայտված լինի մայր ընկերության կողմից կազմված համախմբված ֆինանսական հաշվետվության մեջ,

է) ե) կետում նշված համախմբված հաշվետվությունները, համախմբված տարեկան զեկույցը և այդ հաշվետվությունների աուդիտ իրականացնելու համար պատասխանատու անձի հաշվետվությունները պետք է հրատարակվեն դուստր ձեռնարկության համար՝ անդամ պետության օրենքներով սահմանված կարգով՝ համաձայն թիվ 68/151/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածի»:

▼ M5

Հոդված 57ա

Անդամ պետությունները կարող են 1(1) հոդվածի առաջին ենթապարբերությամբ նախատեսված ընկերություններից, որոնք 1(1) հոդվածի երկրորդ և երրորդ ենթապարբերություններում թվարկված ընկերություններում ու կազմակերպություններում (շահագրգիռ կազմակերպություն) անսահմանափակ պատասխանատվություն ունեցող անդամ են, պահանջել իրենց հաշվետվությունների հետ մեկտեղ աուդիտ անցկացնելուց և հրապարակելուց հետո կազմել շահագրգիռ կազմակերպության հաշվետվությունները՝ սույն Հրահանգի դրույթներին համապատասխան:

Սույն Հրահանգի պահանջներն այս դեպքում չեն կիրառվում շահագրգիռ կազմակերպության նկատմամբ:

2. Անդամ պետություններ կարող են չկիրառել սույն Հրահանգի պահանջները շահագրգիռ կազմակերպության նկատմամբ, եթե՝

ա) այս կազմակերպության հաշվետվությունները կազմվում են, աուդիտի են ենթարկվում և հրապարակվում են սույն Հրահանգի դրույթներին համապատասխան այն ընկերության կողմից, որը կազմակերպության անսահմանափակ պատասխանատվությամբ անդամ է և ղեկավարվում է մեկ այլ անդամ պետության իրավունքով,

բ) շահագրգիռ կազմակերպությունը ներառված է համախմբված հաշվետվությունում, որը մշակվել է, աուդիտի է ենթարկվել և հրապարակվել է թիվ 83/349/ԵՏՀ հրահանգի համաձայն անսահմանափակ պատասխանատվությամբ անդամի կողմից կամ եթե շահագրգիռ կազմակերպությունը ներառվում է կազմակերպությունների ավելի մեծ մարմնի համախմբված հաշվետվությունում, որը կազմվել, աուդիտի է ենթարկվել և հրապարակվել է Խորհրդի թիվ 83/349/ԵՏՀ հրահանգի համաձայն, անդամ պետության իրավունքով ղեկավարվող մայր ընկերության կողմից: Ազատումը պետք է բացահայտվի համախմբված հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

3. Շահագրգիռ կազմակերպությունն այս դեպքերում պետք է ըստ պահանջի պարզի հաշվետվությունները հրապարակող կազմակերպության անվանումը:

▼M1

Հոդված 58

Անդամ պետությունը կարող է չկիրառել սույն Հրահանգի՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունների աուդիտի և հրապարակման վերաբերյալ դրույթները այն ընկերությունների նկատմամբ, որոնց վրա տարածվում է նրանց ազգային իրավունքը և որոնք մայր կազմակերպություններ են՝ ելնելով 83/349/ԵՏՀ հրահանգի նպատակներից, եթե բավարարվում են հետևյալ պայմանները՝

ա) մայր կազմակերպությունը պետք է կազմի համախմբված ֆինանսական հաշվետվություններ՝ 83/349/ԵՏՀ հրահանգին համապատասխան և ընդգրկվի համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

բ) վերը նշված ազատումը պետք է բացահայտվի մայր կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

գ) վերը նշված ազատումը պետք է բացահայտվի մայր կազմակերպության կողմից կազմված համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

դ) մայր ընկերության՝ սույն Հրահանգին համապատասխան որոշվող շահույթը կամ վնասը, պետք է ներկայացվի մայր ընկերության հաշվապահական հաշվեկշռում:»:

Հոդված 59

1. Անդամ պետությունը կարող է պահանջել կամ թույլ տալ, որ 17-րդ հոդվածում սահմանվածի համաձայն մասնակցության մասնաբաժիններն այն ձեռնարկությունների կապիտալում, որոնց ընթացիկ և ֆինանսական քաղաքականության վրա էական ազդեցություն են գործում, արտահայտված լինեն հաշվեկշռում՝ ստորև նշված 2-9-րդ պարբերությունների համաձայն, որպես «դուստր ձեռնարկություններում բաժնետոմսեր» կամ «մասնակցության մասնաբաժիններ» կետերի ենթակետեր՝ ըստ հանգամանքների: Ձեռնարկությունը մեկ այլ ձեռնարկության նկատմամբ զգալի ազդեցություն ունի, երբ նրան է պատկանում այդ ձեռնարկությունում «բաժնետիրական» կամ «անդամակցային» ձայնի իրավունքների 20 տոկոսը կամ ավելին: Կիրառվում է թիվ 83/349/ԵՏՀ հրահանգի 2-րդ հոդվածը:

Եթե սույն հոդվածը առաջին հերթին կիրառվում է վերը նշված 1-ին պարբերությամբ կարգավորվող մասնակցության մասնաբաժնի նկատմամբ, այն ներկայացվում է հաշվեկշռում կամ՝

ա) իր հաշվեկշռային արժեքով՝ հաշվարկված 7-րդ կամ 7ա բաժնի համաձայն: Այդ արժեքի և կապիտալի ու պահուստների՝ այդ մասնակցության մասնաբաժնով ներկայացված մասնաբաժնին համապատասխանող գումարի միջև տարբերությունն առանձին բացահայտվում է հաշվեկշռում կամ հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Այդ տարբերությունը հաշվարկվում է այն օրվա դրությամբ, երբ այդ մեթոդն առաջին անգամ է կիրառվում, կամ

բ) կապիտալի և պահուստների՝ այդ մասնակցության մասնաբաժնով ներկայացված մասնաբաժնին համապատասխանող գումարով: Այդ գումարի և 7-րդ կամ 7ա բաժնին **▼M8** համապատասխան հաշվարկված հաշվեկշռային արժեքի միջև տարբերությունն առանձին բացահայտվում է հաշվեկշռում կամ հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Այդ տարբերությունը հաշվարկվում է այն օրվա դրությամբ, երբ այդ մեթոդն առաջին անգամ է կիրառվում:

գ) Անդամ պետությունը կարող է նախատեսել վերը նշված պարբերություններից որևէ մեկի կիրառումը: Հաշվեկշռում կամ հաշվետվություններին կից ծանոթագրություններում պետք է նշվի՝ արդյոք (ա), թե (բ) կետն է կիրառվել:

դ) Բացի դրանից՝ վերը նշված (ա) և (բ) կետերը կիրառելիս անդամ պետությունը կարող է պահանջել կամ թույլ տալ այդ տարբերությունը հաշվարկել 1-ին պարբերության մեջ նշված մասնակցության մասնաբաժին ձեռք բերելու օրվա դրությամբ կամ երկու կամ ավելի փուլերով ձեռքբերման դեպքում՝ բաժնետոմսերի նկատմամբ սեփականությունը վերը նշված 1-ին պարբերության իմաստով մասնակցության մասնաբաժնով փոխարինվելու օրվա դրությամբ:

3. Եթե այն ձեռնարկության ակտիվներն ու պարտավորությունները, որում մասնակցության մասնաբաժինը ձեռք է բերված վերը նշված 1-ին պարբերության իմաստով, գնահատվել են այլ մեթոդներով, քան տարեկան ֆինանսական հաշվետվություն կազմող ընկերության կողմից կիրառված մեթոդները, ապա դրանք վերը նշված 2-րդ պարբերության (ա) կամ (բ) կետերում հիշատակված տարբերությունը հաշվարկելու նպատակով կարող են վերագնահատվել տարեկան ֆինանսական հաշվետվություններ կազմող ընկերության կողմից կիրառվող մեթոդների համաձայն: Եթե նման վերագնահատում չի իրականացվել, այդ փաստը պետք է բացահայտվի հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Անդամ պետությունը կարող է պահանջել նման վերագնահատում:

4. Վերը նշված 2-րդ պարբերության մեջ հիշատակված հաշվեկշռային արժեքը կամ վերը նշված 2(բ) պարբերության մեջ հիշատակված կապիտալի ու պահուստների մասնաբաժնին համապատասխանող գումարն ավելացվում կամ պակասեցվում է ֆինանսական տարվա ընթացքում կապիտալի և պահուստների՝ մասնակցության այդ մասնաբաժնով ներկայացված մասնաբաժնում տեղի ունեցած որևէ փոփոխության գումարով, և այն պետք է կրճատվի տվյալ մասնակցության մասնաբաժնի գծով շահութաբաժնի չափով:

Այնքանով, որքանով վերը նշված 2 (ա) կամ (բ) պարբերության մեջ նախատեսված դրական տարբերությունը չի կարող կապվել ակտիվների կամ պարտավորությունների որևէ խմբի հետ, այն պետք է դիտարկվի «գուդվիլ» հոդվածի նկատմամբ կիրառելի կանոններին համապատասխան:

6. ա) Վերը նշված 1-ին պարբերության իմաստով մասնակցության մասնաբաժիններին վերագրելի շահույթի ու վնասի չափը ներկայացվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես համապատասխան վերնագրով առանձին հոդված:

բ) Այն դեպքերում, երբ այդ գումարը գերազանցում է շահութաբաժինների գումարը, որն արդեն ստացվել է կամ որի վճարման պահանջ կարող է ներկայացվել, այդ տարբերության գումարը պետք է փոխանցվի պահուստ, որը չի կարող բաշխվել բաժնետերերի միջև:

գ) Անդամ պետությունը կարող է պահանջել կամ թույլ տալ, որ վերը նշված 1-ին պարբերության մեջ նշված մասնակցության մասնաբաժիններին վերագրելի շահույթի ու վնասի չափը ներկայացվի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում միայն այն գումարի սահմաններում, որը համապատասխանում է շահութաբաժիններին, որոնք արդեն ստացվել են կամ որոնց վճարման պահանջ կարող է ներկայացվել:

7. 83/349/ԵՏՀ հրահանգի 26(1)(գ) հոդվածում նշված բացառումներն իրականացվում են այնքանով, որքանով փաստերը հայտնի են կամ կարող են հաստատվել: Կիրառվում է այդ հրահանգի 26(2) և (3) հոդվածը:

8. Եթե այն կազմակերպությունը, որում վերը նշված 1-ին պարբերության իմաստով մասնակցության մասնաբաժին է պատկանում, կազմում է համախմբված ֆինանսական հաշվետվություններ, ապա նախորդող պարբերությունները կիրառվում են նման համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված կապիտալի ու պահուստների նկատմամբ:

9. Սույն հոդվածը կարող է չկիրառվել, եթե վերը նշված 1-ին պարբերությամբ սահմանված մասնակցության մասնաբաժինը էական չէ՝ 2(3) հոդվածի նպատակներից ելնելով:»:

▼B

Հոդված 60

Մինչև հետագա համաձայնեցման գործընթացի ավարտը, անդամ պետությունները կարող են սահմանել, որ այն ներդրումները, որոնցում 5(2) հոդվածի իմաստով ներդրումային ընկերությունները ներդրել են իրենց միջոցները, գնահատվում են ը M10 իրենց արդար արժեքի հիման վրա:

Այդ դեպքում, անդամ պետությունները կարող են փոփոխական կապիտալով ներդրումային ընկերությունների նկատմամբ չկիրառել 36-րդ հոդվածում նշված արժեքի ճշգրտումներն առանձին ցույց տալու պարտականությունը:

▼M12

Հոդված 60ա

Անդամ պետությունները պետք է կանոններ սահմանեն՝ սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային իրավական ակտերի խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ և ձեռնարկեն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ դրանց կիրարկումն ապահովելու համար: Նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ:

▼M1

Հոդված 61

Անդամ պետությունը կարող է չկիրառել սույն Հրահանգի՝ համապատասխան կազմակերպությունների կապիտալի ու պահուստների և շահույթի ու վնասի չափին վերաբերող 43(1) հոդվածի 2-րդ կետի դրույթներն այն ընկերությունների նկատմամբ, որոնց վրա տարածվում է նրանց ազգային իրավունքը, և որոնք մայր կազմակերպություններ են՝ 83/349/ԵՏՀ հրահանգի նպատակներից ելնելով՝

ա) եթե համապատասխան կազմակերպություններն ընդգրկված են այդ մայր կազմակերպության կողմից կազմված համախմբված ֆինանսական հաշվետվություններում կամ կազմակերպությունների ավելի մեծ խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում, ինչպես նշված է 83/349/ԵՏՀ հրահանգի 7(2) հոդվածում, կամ

եթե համապատասխան կազմակերպություններում սեփականության օբյեկտներին անդրադարձ է կատարվել մայր կազմակերպության կողմից դրա տարեկան ֆինանսական հաշվետվություններում՝ 59-րդ հոդվածին համապատասխան, կամ այդ մայր կազմակերպության կողմից 83/349/ԵՏՀ հրահանգի 33-րդ հոդվածին համապատասխան կազմված համախմբված ֆինանսական հաշվետվություններում:»:

▼ M12

Հոդված 61ա

Հանձնաժողովը 2007 թվականի հունիսի 1-ից ոչ ուշ պետք է վերանայի 42ա-42գ հոդվածների, 43(1)(10) և (14) հոդվածի, 44(1) հոդվածի, 46(2)(գ) հոդվածի ու 59(2)(ա) և (բ) հոդվածի դրույթները՝ հաշվի առնելով արդար արժեքի հաշվարկման մասին իրավական ակտերի կիրառման արդյունքում ձեռք բերված փոքր և հատկապես թիվ 1606/2002 կանոնակարգի համաձայն ընդունված Միջազգային հաշվապահական հաշվառման 39-րդ ստանդարտը (IAS 39), ինչպես նաև հաշվի առնելով հաշվապահական հաշվառման ոլորտում գրանցված միջազգային զարգացումները, և, անհրաժեշտության դեպքում, առաջարկ ներկայացնի Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ՝ վերը նշված հոդվածները փոփոխելու նպատակով:

▼ B

Հոդված 62

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

(1) ՊՏ թիվ C 129, 11.12.1972թ., էջ 38:

(2) ՊՏ թիվ C 39, 07.06.1973թ., էջ 31:

(3) ՊՏ թիվ L 65, 14.03.1968թ., էջ. 8:

(4) ՊՏ L 193, 18.03.1983թ., էջ 1: Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001/65/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 283, 27.10.2001թ., էջ 28):

(5) ՊՏ թիվ L 26, 31.1977թ., էջ. 1:

(6) ՊՏ L 261, 13.10.2003թ., էջ 1: Թիվ 108/2006 կանոնակարգով (ԵՀ) վերջին անգամ փոփոխված կանոնակարգ (ՊՏ, L 24, 27.01.2006թ., էջ 1):

(7) ՊՏ L 243, 11.09.2002թ., էջ 1:

(8) ՊՏ L 157, 9.06.2006թ., էջ 87:

(9) ՊՏ L 145, 30.04.2004թ., էջ 1:

(10) ՊՏ L 142, 30.04.2004թ., էջ 12:

(11) ՊՏ L 126, 12.05.1984թ., էջ 20: